783

Վ. ԱԼԵՔՍԵՅԵՎ ՅԵՎ
Ի. ԽՈՐԻԿՈՎ

ՓՈՐՁՎԱԾ ԳՆԴԱՑՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆ
1930

623.42
Ա-29

623.42
Ա-29

04 AUG 2010

Վ. ԱԼԵՔՍԵՅԵՎ ՅԵՎ Ի. ԽՈՐԻԿՈՎ

162775

ՓՈՐՁՎԱԾ ԳՆԴԱՑՐՈՐԴԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ

ՀԱՍՏՈՑԱՎՈՐ ԳՆԴԱՑՐԻ ԿՐԱԿԸ ՄԱՐՏՈՒՄ

14 նկարով

ՀԱՅԿ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ.

13.292

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 2176
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5079 (Բ)
ՏԻՐԱԺ 2000

37863-62

В. Алексеев и И. Хориков

Рассказы Бывалого пулеметчика

Վ. Ալեքսեյեվ և Ի. Խորիկով.—«Փորձված գնդացրորդի պատմվածքները».—Այս գրքում իսկական պատմական, այսինքն՝ քաղաքացիական պատերազմից վերցրած իրական դեպքերի հիման վրա բացատրված են հաստատակամ գնդացրի մարտական հրաձգության կանոնները՝ մարտի զանազան պարագաներում։ Գրքույկը յերկրորդ տարվա ծառայության կ. բանակայինի և այնպիսի ընթերցողի համար է, վորն արդեն ծանոթ է գնդացրի նյութական մասի և մեր մարտակարգերի հետ։ Յեթե գրքույկն ոգտագործվում է խմբական ընթերցանության համար, ղեկավար-գնդացրորդը կարող է կարդալ միայն գրքույկում զետեղված պատմական օրինակները, իսկ յեզրակացությունները հանել ուժանդակ հարցերի միջոցով։

ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ
ԳՆԴԱՑՐԻ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՏԻՆ—ՄՈՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Գնդացրային վաշտի ավագը,— գերակետիկ ծառայող Սմելովը,—յեղել եր և՛ իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմներում: Նա մի քաջ գնդացրորդ եր, կարմիր դրոշակավոր: Նրա գլխով շատ անցքեր եյին անցել և դրա համար ել նա ուներ ամեն մի զրույցի համար մարտական որինակ:

Նորեկ գնդացրորդները նրան լսում եյին ականջները չորս արած, վախենալով մի խոսք բաց թողնել նրա պատմածներից, իսկ յեղբակցությունը մտքում մնում եր ինքն իրեն, և յուրաքանչյուր դաս շատ հեշտ եր յուրացվում:

Ահա, թե, որինակ՝ ինչ պատմեց նա մի կետին գնդացրից կրակելու մասին: Այդպիսի հրաձգություն Սմելովին հաճախ եր վիճակվում Մախնոյի դեմ մղած մեր մարտերում:

— Յես այն ժամանակ նշանառու-գնդացրորդ եյի,— պատմում եր Սմելովը,— նշանակում է, առաջին համարն եյի: Դասակի հր-

բամատարը բացատրեց մեզ, վոր մեր գնդացիրը խնդիր է ստանում պաշտպանել գումարտակի դասավորության աջ թևը: Ցես լսեցի, ինչպես Ջոկի հրամատարը կրկնեց դասակի հրամատարի խնդիրը և վերջինս ասաց. «Ճիշտ է»: Այն ժամանակ մենք անցանք աշխատանքի:

Ջոկի հրամատարը գնդացիրը թողեց իր տեղում: Գնդացրի հետ մնացին նշանառվի ոգնականը, 2-րդ համարը և փամփշտակիրը: Յերկրորդ համարին հրամայված եր գնել գնդացիրը, փամփշտակիրների մեկին՝ պատրաստել ջրի պաշար, յերկու փամփշտակիրներ պետք է ստուգեյին լցրած ժապավենները և պատրաստեյին (լցնեյին) ելի մի քանի ժապավեններ, իսկ չորրորդ փամփշտակիրը խնդիր ստացավ հետախուզել (գտնել) մոտիկ գաղտնի ճանապարհը դեպի փամփշտակայանը: Այսպիսի կարգադրություններ տալով, Ջոկի հրամատարը հրամայեց ինձ ու յերկրորդ համարին, նշանակում է դիտողին, հետևել իրեն՝ ընտրելու գնդացրի համար կրակային կետ,— կանոնագրքով այսպես է կոչվում գնդացրի դասավորության վայրը (դիրքը) մարտում կրակ մղելու համար:

Մենք դուրս յեկանք և կամաց-կամաց ու ծածկված սկսեցինք առաջանալ: Մեկ ել տեսանք մեր առաջներս ճահճի միջով անցնում է լցնովի ճանապարհը (ճեղանուղի յեն ասում): Ճահճով կարող են անցնել մի-մի հոգի և այն ել դժվարությամբ: Ճանապարհն սկզբում ու-

ղիղ է, իսկ հետո թեքվում է դեպի ձախ և տանում անտառը:

Ցես կարծում եմ, վոր հակառակորդը



Նկ. 1. Այն դիրքը, վորտեղից Սմելովը կրակ եր վարում բանդիտների դեմ.

կարող է յերևալ միայն ճանապարհի այդ ոլորանից: Ուրեմն, գնդացիրը հարկավոր է նշան բռնել այդ վոլորանի վրա:

Ջոկի հրամատարը, գնելով, համաձայնեց վորոշել տարածությունը մինչև ճանապարհի ոլորանը, իսկ ինքն ինձ հետ միասին սկսեց փնտռել կրակային կետը:

01.02.2013

Գնդացրի համար վայրը մենք դատանք միանգամից—ճանապարհի մոտի տուվում։ Այնտեղից յերևում եր համարյա ամբողջ ճանապարհը· տուվով կարելի յեր ծածկված և հարմար ձևով փամփուշտներ կրել դեպի կրակային կետը, իսկ գնդացիրը դասավորել թփուտներում տուվի մոտ այնպես, վոր հակառակորդի համար դժվար լինի հայտաբերել այն ճահճից։ Մինչև մենք գնդացրի համար տեղ եյինք փնտրում, դիտողը վորոշեց տարածությունը· «մինչև ճանապարհի ոլորանը 450 քայլ է»։

—«Ճիշտ վորոշեցիր»,—հաստատեց Ջոկի հրամատարը։ Վերջացնելով այդ գործը, նա ընտրեց իրեն համար մի տեղ, հետո ցույց տվեց դիտողի տեղը գնդացրից մի 8 քայլի վրա, դարձյալ թփուտներում։

Պատրաստվեցինք այդպիսի ձևով։ Յես գիտեյի, թե ուր պետք է կրակել, գիտեյի տարածությունը, գիտեյի գնդացրի տեղը· գիտեյի նույնպես, թե վորն է փամփուշտներ հասցնելու ամենալավ ճանապարհը։

Մինչ այդ գնդացրի մոտ գնդացրորդները նույնպես ի զուր ժամանակ չեյին կորցնում։ Յերկրորդ համարը ստուգեց փականի աշխատանքը, ստուգեց բացակները, գննեց գնդացիրը, յուղեց իրար շփվող մասերը, ստուգեց հաստոցը։ Փամփշտակիրները նույնպես կատարեցին այն ամենը, ինչ հրամայել եր Ջոկի հրամատարը։

Յերբ մենք վերջացրինք կրակային կետի

ընտրության մեր աշխատանքը, Ջոկի հրամատարը յերկու անգամ կարճ ու կտրուկ սուլեց սուլիչով,— այդ պայմանական նշան եր գնդացիրը դեպի դիրքն առաջ քաշելու համար։ Մի յերկու րոպե անց գնդացիրն արդեն մեզ մոտ եր։

Յես մյուս գնդացրորդների հետ միասին գնդացիրն առաջ քաշեցի դեպի ընտրած կրակային կետը, առատամից բռնած՝ փողաբերանը շուռ տվեցի դեպի հակառակորդի կողմը և ապա, գլորելով, հասցրի մինչև ընտրված տեղը, տուվի մեջ, յերկու թփերի արանքում։ Տեսա, վոր գնդացիրը վատ չեմ քողարկել։ Այդ յես արեցի հակառակորդից աննկատելի կերպով։ Դրանում ինձ ոգնեց նաև իմ փորձառությունը։

Այժմ դուք գիտեք, վոր արագ կրակ բանալու համար և վորպեսզի հրաձգությունը ճիշտ լինի, պետք է գործել հետևյալ պլանով·— սեղանը դնել հորիզոնական դիրքով, լցնել, նշան բռնել և կրակել։ Հիշելով այդ, յես սեղանը դրեցի հորիզոնական դրությամբ, այնուհետև հրամայեցի ոգնականիս փորել աջ անվի տակն այնքան, մինչև վոր անիվները հավասար կանգնեն։ Յերբ այդ արեցինք, յես լցրեցի գնդացիրը, ոլորած գրատս դրեցի առատամի լայնքով արմունկներով հենվելու համար, դրեցի նշանոցը 4-ի վրա մինչև ճանապարհի ոլորանը յեղած տարածության համեմատ, ուղղանը 0-ի վրա (քամու ուղղում-

ներ ու չեղումներ յես չարեցի, վորովհետև նշանը շատ մատ եր) և սկսեցի նշան բռնել ուղիղ ճանապարհի մեջտեղը:

Թանդ եր վոչ միայն յուրաքանչյուր բոպեն, այլև յուրաքանչյուր վայրկյանը: Այդ պատճառով յես աշխատում եյի վորքան կարելի յե շուտ նշան բռնել դեպի ընտրած կետը: Թե ինչպես պետք է այդ անել, մեզ արդեն սովորեցրել եյին հրամատարն ու մարտական պարապան: Ինքս ամրացրի հորիզոնական նշանառությունը, իսկ ոգնականիս հրամայեցի ամրացնել նուրբ նշանառությունը. նա այդ կարողանում եր անել, առանց անտեղի մի քանի անգամ պատեցնելու սեղմիչ գնդերիթը, այլ ինչպես և յես գնդերիթն ամրացնում եր միայն մի քառորդ պտույտով:

Այնուհետև յես սկսեցի նշան բռնել. սկզբում հորիզոնական ուղղությամբ: Ցեռ վերցրի ծոծրակալի կոթունները, շուտ տվեցի գնդացիրը դեպի նշանառության կետը, տեսնեմ՝ նշանառության գիծը շատ ավելի վեր է ճանապարհի մեջտեղից: Բռնեցի նուրբ նշանառության թափանվակից և վերցրի հարթ հատիկ ու սկսեցի հատիկը տալ նշանառության կետի տակ: Հատիկն ընկավ ճանապարհի տակ, իսկ նշանառությունը դուրս յեկավ շատ ավելի ձախ:— Հոդ չե,— մտածում եմ,— այժմ թեև վոչ ամենայն վստահությամբ բայց և այնպես կրակել կարելի յե: Իսկ ինքս միևնույն ժամանակ հրում եմ գնդացրի մարմինը, ձեռքի ափով խփելով ծոծրակալի աջ կոթունին: Մի փոքր դարձրի, թեթև կերպով խփեցի նաև ձախ կոթունին,— տեսնեմ՝ լավ է ստացվում: Միայն թե գնդացիրը նշան է բռնված շատ քիչ դեպի ցած: Պատեցրի թափանվակը մի փոքր դեպի ինձ: Այս անգամ արդեն լավ է և հորիզոնականով և բարձրությամբ: Ձախ ձեռքս մեկնում եմ ամրացնելու համար հորիզոնական նշանառությունը, և ոգնականիս հրամայում եմ՝ «Ամրացնել վերամբարձ մեխանիզմը»: Միաժամանակ ամրացրինք մեխանիզմները:

Ասում են՝ «պատմելը հեշտ է, քան թե գործելը», բայց յես ձեզ շատ յերկար եմ պատմում, մինչդեռ աշխատանքը մենք շատ արագ կատարեցինք: Այդպես ել մարտում միշտ պետք է անել: Բայց չպետք է մոռանալ դլխավորը՝ գործդ արագ կատարիր, բայց լավ արա, թե չե շատ թանդ կնստի քո յուրաքանչյուր սխալը, անիմաստ շտապողականությունից վոչ մի ոգուտ չի դուրս գա:

Նշանառությունը վերջացրինք, ապատ շունչ քաշեցինք. ամեն ինչ պատրաստ է հակառակորդին դիմավորելու համար: Կարող եմ յուրաքանչյուր բոպե կրակ բանալ: Սպասում եմ և նայում ուշադրությամբ, թե չի՞ յերևում արդյոք հակառակորդը: Թշնամին ել իրեն շատ սպասել չտվեց: Մի 10 բոպե չեր անցել, մեկ ել տեսնեմ՝ ճանապարհի ոլորանի յետևից յերևաց մի ձիավոր, իսկ նրա յետևից

վից սլանում է գնդացրասայլը, նրա յետևից մի ուրիշը։

«Հանգիստ»,— մտածում եմ ինքս ինձ։— Ամեն ինչ կարգին է, վոչ վոք մեզ մոտենալ չի կարող, կհնձենք բոլորին»։ Իսկ ձեռքերս ինքնաբերաբար (յես մինչև իսկ չեյի մտածում այդ մասին) բարձրացրին պահպանակը։

Սեղմեցի վայրիջույց լծակին,— տեսնեմ՝ գնդակները ճանապարհին փոշու մի ամբողջ ամպ բարձրացրին, այնպես վոր իսկի չի յերևում գնդացրի կրակի գործողությունը... բայց վայրիջույց լծակը ձեռքիցս չեմ թողնում, քանի վոր գիտեմ, վոր իմ գնդակների խուրձի տակից չի անցնի-պրծնի վոչ միայն գնդացրասայլը, այլև մենակ մարդը։

Գնդացիրը լավ եր պատրաստված, այդ պատճառով էլ նա այնպես եր գործում, վոր մինչև անգամ ինքս էլ զարմացա, ինչքան չլինի հին մեքենա յեր, մարտերում յեղած մեքենա։ Անընդհատ կրակով, առանց վորևե խափանումի բաց թողեց մի լրիվ ժապավեն։ Վերջում միայն փամփշտի թեքված քթեղավ, բայց յես խակուն չտկեցի։

Ցերը փոխում եյի ժապավենը, քամին մի կողմ քշեց փոշու ամպը, և յես նոր միայն տեսա, թե ինչ գործ է կատարել իմ գնդացիրը։ Մեկը մյուսի վրա ընկած եյին ջարդված գնդացրասայլերը, նրանց մոտ թրպրտում եյին վիրավորված ձիերը, ձիերից մեկը խրվել եր ճահճի մեջ։ Ճանապարհի կողմերով,

սողալով, թաքնվելով ձիերի դիակների յետևում, շարժվում եյին հակառակորդի մարտիկները։ Ցես հասկացա, վոր բանդիտներն ուզում են գնդացրասայլերից հանել գնդացիրները և յետ քաշել վիրավորներին. գուցե մինչև իսկ ուզում են իմ գնդացրի դեմ հասցել իրենց գնդացիրը։

Բայց հակառակորդի համար ճանապարհը փակված եր և նրան չհաջողվեց հանկարծակի հարձակում գործել մեր աջ թևի դեմ։

Ցես հենց սկզբից հասկացա, վոր հակառակորդին չի կարելի թույլ տալ տիրապետելու ճանապարհին և այնտեղ հասցնելու իր գնդացիրը,— յեթե վոչ ինձ համար շատ դժվար կլինի։

Ժապավենը փոխելուց հետո, նայեցի, թե չի՞ խախտվել արդյոք նշանառությունը... Ջե, ամեն ինչ կարգին եր, ուստի այնուհետև հենց վոր մի վորևե շարժում եյի նկատում հակառակորդի մոտ, յես անմիջապես սկսում եյի գնդակոծել ճանապարհը։ Գնդակոծը կատարում եյի հերթերով, ամեն մեկում 10—15 փամփուշտ։

Ցերը այդ ձևով յես բաց եյի թողնում յերկրորդ ժապավենը, հակառակորդը զգաստ եց յերևալ ճանապարհին. յերևի նա հասկացավ, վոր այդ ճանապարհով փորձել անգամ չի կարելի և սկսեց մի այլ ճանապարհ փընտռել։ Մինչ այդ փամփշտակիրներն արդեն կարողացել եյին բերել-հասցնել նորից 4 տուփ

լցրած ժապավեն, և այդպիսով յես լիովին ապահովված եյի փամփուշտներով:

Դասակի հրամատարն ու վաշտի հրամատարը հետո ասացին, վոր իմ գնդացիրը շատ լավ եր պատրաստված, և վոր ինձ առաջադրած խնդիրը յես կատարել եյի սքանչելի կերպով: Յեվ ճիշտ վոր, մենք փառահեղ կերպով աշխատեցինք: Բայց, ի հարկե, այդ միայն իմ շնորքը չեր. գնդացրի ամբողջ անձնական կազմը մեծ յեռանդով ու նվիրվածությամբ եր աշխատում: Յեվ արդյունքը յեղավ համերաշխ աշխատանքը, և խնդիրն ել կատարվեց լիովին:

Այժմ, վորպեսզի իմ պատմվածքն ի զուր չկորչի, չասեք, թե հետաքրքրությամբ լսեցինք ու լավ ժամանակ անց կացրինք և պըրծավ-գնաց, հետևենք, ընկերներ, քայլ առ քայլ, թե ինչպես կատարվեց այդ ամենը, ի՞նչպես պետք է գնդացիրը պատրաստել կրակ բանալու և ի՞նչպես պետք է այդ կրակն ուղղել մի կետի:

Մենք ի՞նչ արինք: Ամենից առաջ՝ դրավեցինք կրակային կետը (մի այլ դեպքում կամ յերբ ժամանակ լիներ, մենք, դուցե, պատրաստեյինք նաև գնդացրային բուն): Հետո՝ մենք այդ կետում հաստեցինք գնդացիրը: Այնուհետև՝ լցրինք գնդացիրը, և վերջապես՝ նշան բռնեցինք: Այ, այս կարգին պետք է հետևել շարունակ և նոր միայն կրակ բանալ, յերբ արդեն գնդացիրը պատրաստ կլինի:

Հիշում ե՞ք, թե ինչից յես սկսեցի հաստումը: Շարունակ հարկավոր է սկզբում գնդացրի սեղանը հաստել հորիզոնական դրությամբ:

Իսկ այդ անելու համար հարկավոր է, աղատելով կառանի հարմարանքը, սեղանն աղեղներով շարժել վեր ու վար: Այնուհետև՝ հաստել գնդացրի անիվները միևնույն մակարդակի վրա: Մենք դրա համար, ինչպես հիշում եք, ստիպված յեղանք մինչև անգամ քիչ փորել բարձք կանգնած անիվը: Յեթե մենք այդ չանեյինք գնդացիրը կթեքվեր մի կողքի վրա, և այն ժամանակ դիպուկության մասին խոսք անգամ լինել չեր կարող: Գնդացիրդ հաստեցիր,— կատարիր կոպիտ նշանառություն ըստ բարձրության, ընտրելով կոպիտ նշանառության ամենից հարմար ծակը: Հետո հարկավոր է մտածել նաև արմունկների հենարանի մասին: Առանց հենարանի վատ է. կախված կմնաս ծոծրակալի բռնակների վրա և դրանով կարող ես խախտել հրաձգության ճշտությունը: Այդ պատճառով, յերբ չկան մշտական արմնկակալներ, լավ է արմունկները դնել ճիմի, տուփի վրա: Յես, ինչպես հիշում եք, արմունկներս դրեցի ոլորած գրատախտակի վրա,— գրատն ամենից լավ է՝ և լավ հենարան է, և՛ թեթև առաձգականություն ունի, արմունկներն ել չեն ցավի:

Յերբ այդ ամբողջը կատարված է, կրակ բանալու համար հարկավոր է լցնել գնդացի-

բը։ Մարտում գնդացիրը չարունակ լցնում են ավտոմատիկ հրաձգության համար։ Հրահանգով գնում են նշանոցը և ուղղանը։ Նշանոցի բարձրությունը կախված է տարածությունից, բայց պետք է հիշել, որ յուրաքանչյուր գնդացիր ունի իր խփելու առանձնահատկությունները։ Գնդացրին սովոր փորձառու դընդացրորդն արագ հարմարվում է այդ առանձնահատկություններին և նշանոցը հաստելու ժամանակ նկատի կունենա այդ առանձնահատկությունները, ինչպես նաև նկատի կունենա հակընդդեմ կամ ուղեկից քամին, սառնամանիքն ու չոգը։ Իսկ ուղղանը հաստելիս հարկավոր է նկատի առնել շեղումը (դերիվացիան), կողքից փչող քամին և, ի հարկե, գնդացրի խփելը։ Մենք, ճիշտ է, այդ ուղղումները չվերցրինք, բայց հիշում եք, թե ինչո՞ւ։ Տարածությունը շատ փոքր եր, ընդամենը 450 քայլ, ուստի և ուղղումները չընչին էին, չէին կարող ազդել հրաձգության ճշտության վրա։

գնդացրի խփելը։ Մենք, ճիշտ է, այդ ուղղանը։ Հիմա ամրացրու հորիզոնական և նուրբ նշանառության սեղմիչ գնդերիթները։ Այստեղ հարկավոր է ձեռք բերել այսպիսի ոգտակար սովորք· թուլացնել և ամրացնել գընդերիթները վոլորանի մի քառորդ չրջադարձի չափ՝ հորիզոնական նշանառությունը— ձախ ձեռքով, իսկ ուղղահայաց նշանառությունը— աջ ձեռքով։ Իսկ յերբ աշխատում է նշանառուն իր ոգնականի հետ միասին, նուրբ նշանառության մեխանիզմն ամրացնում և թուլացնում է յերկրորդ համարը։

Դրանից հետո հարկավոր է գնդացիրը նշան դնել ուղղահայաց և հորիզոնական ուղղությամբ, ոգտվելով վերամբարձ մեխանիզմի թափանվակով և խփելով ծոծրակալի կոթուններին այնքան, մինչև վոր հարթ հատիկը կընկնի նշանառության կետին։

Յերբ նշանը «նստած է հատիկի վրա» անմիջապես ամրացրու սեղմիչ գնդերիթները, բարձրացրու պահպանակը և յերկրորդ համարի միջոցով զեկուցիր, վոր գնդացիրը պատրաստ է։ Իսկ հետո հրամանով, պատվերով, կամ հարկավոր նշանը յերևալու դեպքում կարելի յե արդեն միանգամից կրակ բանալ, սեղմելով միայն վայրիջուց լծակին։

Կրակ վարելու համար անհրաժեշտ է հետևել նշանառության գծով, վորպեսզի գընդացրի նշանառությունը չխախտվի, թեև այդ առանց մեծ սովորության դժվար է անել։

Հարկավոր է նաև ուշադրությամբ հետևել գնդացրի կրակի գործողությունը, իսկ նշանն անհայտանալու դեպքում դադարեցնել գնդացրային կրակը։ Դրա համար բավական է այլևս չսեղմել վայրիջուց լծակին։

Բացի ասածներից, առանց կանգառումների ու խափանումների կրակ վարելու համար հարկավոր է անել հետևյալը· ամեն անդամ մարտում կրակ վարելու համար հարկա-

37863.62 (16275)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ZUUR-ARM SSR

վոր է, վոր ջուրը, յուղն ու պահունի մասերով տուփը շարունակ զանվեն գնդացրի մոտ ձեռքի տակ, վորպեսզի հարկավոր դեպքում կարելի լինի այդ անմիջապես տալ նշանառուին:

ԶՐՈՒՅՑ ՑԵՐԿՐՈՐԴ
ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՇԵՐՈՎ, ՑՐՈՒՄՈՎ ՄՈՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

— Մարտերը տեղի էին ունենում Վորոնեժի նահանգում Կալաչայի մոտ,— սկսեց ավտոը: Մեր գումարտակը դասավորվել էր Յուդին ագարակի մոտ: Պետք է ասել, վոր ըստլիտակները գործում էին միշտ էլ միատեսակ· աշխատում էին հարձակվել հանկարծակի, գլխավորապես՝ առավոտյան, յերբ հազիվ հաղ սկսվում է լուսաբացը: Այդ մենք շատ լավ գիտեյինք, քանի վոր մեր գունդն ամբողջ ժամանակ զանվում էր սպիտակների դեմ մըղած մարտերում: Այդ պատճառով էլ, յերբ մենք կանգ առանք Յուդինի մոտ, վաշտի հրամատարը հրամայեց դեռ լուսով պատրաստել գնդացրերն այն դեպքի համար, յերբ հանկարծ յերևան կազակները: Այնուհետև դասակի հրամատարը ցույց տվեց մեր գնդացրին գնդակոծի տեղամասը, և ասաց, վոր հարկավոր է ամեն ինչ պատրաստել՝ կրակ բանալու համար մոտ տարածությունից ցերեկով ու գիշերով: Յեվ մենք անցանք աշխատանքի:

Խնդիրը կատարելու համար, հարկավոր էր ամենից առաջ լավ ուսումնասիրել տեղամասը: Մենք տեղավորվեցինք շատ գաղիկող, հարթ լանջի վրա, վորը հակառակորդից ինքնում էր դեպի մեր դիրքերի կողմը: Վայրը հարմար էր հեծյալ գրոհների համար: Առջևում կես վերստի վրա,—քաղաքացիական կռիվների ժամանակ դեռ ևս տարածությունը հաշվում էին վերստերով և վոչ թե կիլոմետրերով,— կար մի բլրակ, վրան մեծ առուն: Մենք ջոկի հրամատարի հետ միասին զննեցինք գնդակոծի ամբողջ տեղամասը և վորոշեցինք, ինչպես հարկն է, նրա սահմաններն աջից ու ձախից: (Տես նկար 2-րդ):

Գնդացրի դասավորության համար տեղը մեզ ցույց տվեց դասակի հրամատարը, ուստի ջոկի հրամատարը, բաշխելով աշխատանքը համարների միջև, սկսեց ինձ հետ միասին հասցել գնդացիրը:

Հարկավոր էր գնդացիրը հասցել այնպես, վոր նա վորքան կարելի յե կայուն լինի, վորպեսզի հրաձգության ժամանակ նա նստվածքներ չտա: Վորովհետև յեթե գնդացիրը նրստվածքներ տա, այն ժամանակ, ի հարկե, գընդակները սխալ ուղղությամբ կթռչեն: Գնդացիրը դրեցինք շատ ամուր:

Նկատելով, վոր ձախ ռնգվը փոքր ինչ բարձր է աջից, մենք անիվի տակը փորեցինք այնպես, վոր սեղանը հորիզոնական դրություն ստացավ, այսինքն՝ այնպիսի դրու-

թյուն, ինչպիսին կընդուներ նա, յեթե հարթ հատակի վրա դրված լիներ: Յեթե այդպես չանենք, հրաձգության ժամանակ գնդակները կթռչեն իջեցման կողմը և դեպի ծաց:



Նկար 2-րդ. Գնդակոծի սահմանները.

Մենք լավ ամրացրինք առատամը և այնուհետև, վորպեսզի գնդացիրն իր տեղն անի, յես մի քանի մենաղարկ ձիգեր կատարեցի, ոգավելով այն հանգամանքից, վոր հրաձգությունը դեռ չեր դադարել: Այնուհետև գնդացիրը նշանադրեցի անատուի յեզրին: Այդ միջոցին 2-րդ համարը մի ցից խփեց գնդացրի պատյանի ձախ պռունկին հավասար: Հետո յես նշան բռնեցի գնդացիրն ավերված պարապի դեմ, իսկ 2-րդ համարը ցիցը խփեց պատյանի աջ կողմից: Այժմ արդեն գիտեյի, վոր հրաձգության ժամանակ գնդակների ցրումը դեպի աջ ու ձախ սահմանափակ կլինի: Գնդացրերի հաստոցների վրա կարելի յե յերբեմն տեսնել հատուկ հարմարանք ցրումը սահմանափակելու համար: Այդպիսի հարմարանքով աշխատելն, ի հարկե, անհամեմատ ավելի հեշտ է: Բայց մեր գնդացրի վրա տակավին այդպիսի հարմարանք չկար:

Առաջիկա հրաձգության համար մենք ընտրեցինք 4 նշանոցը: Այդ նշանոցով յես, վարելով գնդացիրն այնպիսի արագությամբ, վորպեսզի կարելի լինի հարվածել մեզ տված տեղամասի ամբողջ լայնությունը, ժամանակ առ ժամանակ կատարում եյի մենաղարկ ձիգեր,— թեև գնդացիրը լցված եր ավտոմատիկ հրաձգության համար: Մենաղարկ ձիգերը նրա համար եյին, վորպեսզի հակառակորդը չիմանա գնդացրի տեղը: Ջոկի հրամատարն ու դիտողը, հետևելով գնդակների ընկնելու տեղին, վորոշեցին, վոր գնդացիրը լավ է հաստատված, և վոր կրակը կարելի յե բանալ յուրաքանչյուր րոպե:

Յերբ գիշերը յես անցա հերթապահության, ամենից առաջ զննեցի, թե արդյոք ամեն ինչ կարգին է ինձ մոտ: Գնդացիրն առաջվա պես պատրաստ եր կրակ բանալու համար:

Առջևում բլրակի վրա գտնվում էր մեր գաղոնքը. նա պետք է նշան տար հակառակորդի յերևալու մասին. պայմանական նշանն էր՝ կարմիր հրթիռը:

Տաք դիշերը արամադրում էր քնելու. բայց քնել չէր կարելի: Թշնամին քնած չէր. նա իր սիրած ժամանակին սկսեց հարձակումը: Լավեցին կրակոցներ գաղոնքի կողմից, և դրա հետ միասին վեր սլացան իրար յետևից կարմիր հրթիռները: Սպիտակները հասկացան, որ իրենք հայտաբերված են և դուռով նետվեցին դրսի: Յես լսեցի նրանց ձայնը, բայց դրսողներին չտեսա: Այդ պատճառով յես չեյի կրակում, բայց ձեռք դրել եյի զնդացրի կոթունների վրա և բարձրացրել եյի պահպանակը:

Ցրող մեխանիզմն ամրացված չէր. յես կարող եյի յուրաքանչյուր րոպե կրակս տեղափոխել մեր տեղամասի ցանկացած կետը:

Վերջապես՝ դուրչ յերկնքի ֆոնի վրա լսեցին գծագրվել ձիավորների կերպարանքները: Վայրկյանապես յես շուռ տվեցի զնդացիրս դեպի ձախ, նշան բռնեցի ամենածայրի ձիավորին, սեղմեցի վայրիջուցյ լծակին և սահուն կերպով, առանց սեղմելու ծոծրակալի կոթուններին, սկսեցի վարել զնդացիրը դեպի աջ նույնպիսի արագությամբ, որպիսի արագությամբ նախորդին կատարել եյի փորձնական հրաձգությունը:

Այսպիսի զնդակոծ կատարելու համար, անհրաժեշտ էր, որ յես ինձ խիստ զսպեյի, որովհետև ձիավորները մոտենում եյին արագ, և չարունակ ցանկություն էր առաջանում ավելի արագ զնդակոծելու ամբողջ տեղամասը: Զնդացիրը հասցնելով մինչև աջ թևի սահմանը վորոշող ցցին, յես առանց հապաղման հավասարաչափ յետ դարձրի զնդացիրը, ամբողջ ժամանակ հետևելով նշանառության գծով զնդացրի գործողությանը: Դիտելով կազակներին, յես նկատեցի, որ նրանք այժմ համարյա առաջ չեն շարժվում: Ժապավենը վերջացավ:

Լցնելով զնդացիրը նոր ժապավենով, յես՝ ականջ դրեցի, թե ինչպես են կրակ վարում հարևան զնդացրերը,— հրաձգությունը չէր դադարում վոչ մի վայրկյան: Ամեն ինչ լավ էր ընթանում: Ժապավենը փոխելու վրա, յես կորցրեցի մի քանի վայրկյան, բայց յերբ կրկին կրակ բաց արեցի, նկատեցի, որ իմ նշանը թաքնվում է բլրակի հետևում: Զզիմանալով հանդիսատ կրակային դիմավորման, կազակներն արագ յետ եյին քաշվում:

— Ի՞նչ կարող ենք մենք ասել այս որինակելի ցրումով հրաձգության մասին:

Ի հարկե, այդպիսի հրաձգության համար զնդացիրը պետք է պատրաստել վաղորոք այնպիսի հաշվով, որ կարելի լինի միանգամից կրակ բանալ և՛ ցերեկով և՛ գիշերով: Իսկ ինչպես պետք է ամրացնել: Ընկեր, ժողով, ապա հիշեցեք:

— Հարկավոր է ամրացնել այնպես, որ հատուցը չշարժվի, որպեսզի նա կանգնած լինի ուղիղ, ինչպես սեղանի վրա։ Իսկ յեթե ուղիղ չի կանգնած, հարկավոր է, որտեղ պետք է տակը փորել, որպեսզի գնդացիրը չթեքվի։

— Ճիշտ է։ Միայն պետք է ավելացնել, որ գնդացիրն իր տեղն առնելու համար հարկավոր է մի տասը գնդակ արձակել, բայց, ի հարկե, այն դեպքում, յերբ նրանց կրակոցի ձայնը խլանում է հարևանների կամ թշնամու հրաձգության ձայնով, թե չե կարելի յե մատնել գնդացշի տեղը։ Իսկ ինչո՞ւ մենք պատյանի աչ ու ձախ կողմից ցցեր խփեցինք։— Ապա, ասացե՛ք, Պետրով։

— Որպեսզի սահմանափակենք ցրումը և գնդակոծը դուրս չհանենք մեզ տված սահմանից։

— Ճիշտ է։ Այդ սահմանափակումը կարելի յե անել և այլ կերպ։ Կարելի յե վրանի պարանի մի ծայրը կապել ծոծրակալի կոթունից, իսկ մյուս ծայրը՝ առաստաղից, և միևնույն ժամանակ նշան բռնելով տեղամասի սահմաններին, գտնել պարանի հարկավոր յերկարությունը։

Իսկ յե՞րբ պետք է բռնել կրակը։

Չե՞ որ գիշերով վատ է յերևում, չատ բան խարում է մեզ, յերբեմն քամին խշխշացնում է թփերը, իսկ քեզ թվում է, որ հակառակորդն է հարձակվում...

— Գիշերով անտեղի և անիմաստ հրաձգությունն չվարելու համար, կրակը պետք է բռնել պայմանական նշանով (հրթիռով) կամ հրամանով և այն ժամանակ, յերբ նշանը պարզ յերևում է։ Ամենից լավ է կրակել այն ժամանակ, յերբ նշանը լուսավորված է արհեստականորեն՝ լուսարձակով, հրթիռներով, խարույկներով։ Բայց այդ ի հարկե, ամեն անգամ հնարավոր չե, ուստի մեծ մասամբ մարդ պետք է այդպիսի դեպքերում հույս ունենա իր փորձառության, ճարտարության և հոտառության վրա։

— Հիմա, իսկ ի՞նչ ձևով պետք է վարել բուն ցրումը։ Ցրել պետք է «յուղի պես», սահուն, հավասարաչափ, առանց սեղմելու ծոծրակալի կոթուններին, առանց վոսայունների։ Իսկ արագությունը պետք է այնպիսին տալ, որ չհարվածված տեղամասեր չմնան։ Գնդակոծի ծայրի կետերում վոչ մի դեպքում չպետք է կանգ առնել, չպետք է «սայթաքել», այլ կրակը պետք է տեղափոխել հակառակ ծայրով։

Ցրումով նշանի լայնությամբ գնդակոծի կանոններն, ինչպես տեսնում եք, չատ հասարակ ու պարզ են։ Բայց հենց դրա համար էլ գնդացրորդը պետք է լավ հիշի այդ կանոնները և հրաձգության միջոցին միչտ մտքումը պահի։ Դուք էլ այդ կանոնները լավ հիշեցեք.

Հաշվի առ գնդակոծի արագությունն ու ժամանակը։

Հարվածիր անպայման նշանի ամբողջ ճակատը։

Ավելի լավ է ձիգերի խուրձով յերկու անգամ ծածկել նշանը, քան թե գնդակոծել միայն նշանի կետը:

ԶՐՈՒՅՑ ՅԵՐՐՈՐԴ

ԻՆՉ Է ՆՇԱՆՈՅԻ ՈՂԸ ՅԵՎ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ Է ՆԱ ՊԵՏՔ ԳՆԴԱՑՐԻ ՎՐԱ

Զեզանից շատերն, ընկերներ, ինձ հարցնում են, թե ինչ բան է գնդացրի վրայի նշանոցային ողը, և ինչպես պետք է նրանով աշխատել: Ահա թե ինչպես յես ինքս ծանոթացա այդ ողի հետ: Լսեցեք և միևնույն ժամանակ զննեցեք այդ ողը: Ահա ողը:

Նկ. 3-րդ: Նշանոցային ող:

Հիշում եմ, յերբ ջոկի հրամատարը բացատրեց ինձ ողի մասին, ասաց, վոր ողի վրա նույնպիսի խազեր կան, ինչպես և նշանոցի վրա: Այդ մեկը յես լավ հասկացա: Մտածում եմ. Ե՛, այստեղ դժվար ի՞նչ կա վոր: Տեղափոխեցի 12-ի վրա, գնդակները ել կթռչեն վոչ թե 1000 քայլ, այլ 1·200 քայլի վրա.—միևնույն է թե նշանոցը տեղափոխել 2 խազով: Յես լսեցի ջոկի հրամատարիս և ասացի՝ «հասկացա ամեն ինչ»: Պարզ է, վոր նա յել ուրիշ վոչինչ չբացատրեց:

Առավոտյան հրաձգություն ունենք: Յերբ հասանք հրաձգարանը, ջոկի հրամատարը հրամայում է ինձ հասցել գնդացիրը: Յես ել հասցնում եմ: Նա ստուգեց հասցումը, և մոտենալով դասակի հրամատարին, մի ինչ-վոր բան զեկուցեց:

Դասակի հրամատարը մոտեցավ ինձ ու հարցրեց.

— Սմելով, դուք միանգամից հասկացաք, թե ինչպես պետք է գործել նշանոցային ողով, այո՞:

— Այո, ընկ. հրամատար,—ասացի յես:

— Այ,— ասում է,— մենք հիմա գործնականապես կստուգենք այդ... Ի՞նչ պետք է անենք ողի հետ, վորպեսզի գնդակները թռչեն 200 քայլ հեռու:

— Պետք է 2 խազ առաջ տալ ողը,— պատասխանում եմ ես:

— Լավ, ճիշտ է,— ասում է նա ու հրամայում է ջոկի հրամատարին գնդացիրը նշան բռնել 400 քայլի վրա գտնվող նշանին:

Նա նշանը դրեց 4 նշանոցով, ողը նույնպես դրեց 4-ի վրա:— Պատրաստ է:

— Դե՛հ, այժմ պատկեցեք 2-րդ համարի տեղը: Վորքա՞ն է ողով:

— Ցուցիչի դեմ կանգնած է 4 թվանշանը,—պատասխանում եմ ես, նայելով ողին:

— Նայեցեք այժմ, թե վորտեղ պետք է դիպչեն գնդակները: 1-ին գնդացիր, հերթ:

Տեսնեմ, վոստոստյուններ կան թիրախների առաջին խմբակի մոտ:

— Այժմ,— ասում է,— կատարեցեք իմ հրամանը: Ողով յերկու առաջ:

Ցես վերցնում եմ ողը, դարձնում եմ նրան այնպես, վոր ցուցիչի դիմաց լինի 6 թվանշանը:

— Պատրաստ է,— ասում եմ, բարձրացնելով ձեռքս:

Իսկ այժմ վորտեղ պետք է պատկեն գնդակները:

— 600 քայլի վրա,— պատասխանում եմ ես:

Նա հրամայում է հերթ, իսկ ես դիտում եմ և աչքերիս չեմ հավատում. գնդակները կրկին առաջվա տեղն են պատկում:

Դասակի հրամատարը ծիծաղում է:

— Բան դուրս չեկավ, չե՞: Տալիս եմ ձեզ մտածելու համար 10 րոպե: Ցեթե առանց վորևե մեկին հարցնելու, դուք ինքներդ գլխի ընկնեք, թե ինչումն է ձեր սխալը, ինձնից, վորպես նվեր կստանաք գրքույկ գնդացրի մասին:

10 րոպեյից հետո, ինչպես ասված եր, ինձ մոտեցան ջոկի ու դասակի ու վաշտի հրամատարները:

Նկ. 4-րդ: Նշանոցային ողի հասատումը:

Ցես սկսում եմ զեկուցել: Դե՛հ, ի հարկե,

այնպես տեղին-տեղին չելի զեկուցում, ինչ-պես այժմ պատմում եմ ձեզ, բայց և այնպես, բավական սրտոտ եղի զեկուցում:

— Սկզբում,— ասում եմ,— պետք է գընդացիրը նշան բռնել այն նշանոցով, վորը հրամայել են ցույց տալով նշանը:

Յերբ գնդացիրն այդ ձևով նշանադրված կլինի, հարկավոր է վերցնել ողը և դնել նույն խաղի վրա, ինչ և նշանոցն է դրված:

Նկ. 5-րդ: Նշանոցային ողի հասատումը թափանվակի ողնությամբ:

— Ճիշտ է,— ասաց ջոկի հրամատարը,— դուք լավ եք հիշել այն, ինչ ես բացատրել եմ ձեզ:

—Յերբ հարկավոր է փոխել հրաձգության հեռակայությունը,— շարունակում եմ ես— հարկավոր է վերցնել նույնը նշանատության թափանվակը և պտտելով այն, ողի հարկավոր խաղը դնել ցուցիչի դեմ:

— Ճիշտ է: Բայց ինչպե՞ս դուք գլխի ընկաք:

Ես պատմեցի այն ամենի մասին, ինչ ես արել եմ ու մտածել այդ 10 րոպեի ընթացքում: Յերբ դասակի հրամատարն, ինձ խնդիր տալով, թողեց մենակ գնդացրի մոտ, ես ըսկզբում չկարողացա հասկանալ, թե ինչումն եր իմ սխալը, և սկսեցի մտածել այն ամենի մասին, ինչ ես արել եղի սկզբից:

Ես ինձ հարց տվեցի. ինչո՞ւ են գընդակները ավելի հեռու թռչում, յերբ մենք մեծ նշանոց ենք դնում: Վորովհետև նշանոցը փոխելով ավելի բարձր խաղի, գնդացիրը նշան ես բռնում կրկին նույն կետին, և դրա հետ միասին բարձրացնում ես փողն ավելի վեր (անհրաժեշտ անկյունի չափով): Բայց յերբ ես դրեցի ողը, չուռ տալով այն, ես վոչ իջեցրի և վոչ էլ բարձրացրի փողանցքը: Ուրեմն գնդակները, ինչպես և տեսա, թռչում եղին միևնույն տարածության վրա, ինչ և առաջ:

Յետ սկսեցի նույն բանի մասին դատել գնդացրի վրա։ Զոկի հրամատարն ինձ առաջ ասաց.

— Յերբ նշանը կդնես, նշան կբռնես գընդացիրը, դիր նույն խազի վրա և ողը։

Յետ տեսա՝ նշանոցը չորս է, գնդացիրը նշանադրված է նշանին, իսկ ողը յես դրել եմ 6-ի վրա։ Յետ դրեցի նշանոցը 4-ի վրա։ Յեկ, փորձեմ,—մտածում եմ,—նշանոցը դնել 6-ի վրա և նշանադրել մի այլ նշանի։ Դրեցի նշանոցը և գնդացիրը նշան բռնեցի 600 քայլի վրա։ Նայեմ ողին, ցուցիչի դիմաց կանգնած է 6 թվանշանը։ Այստեղ յես իսկույն գընալի ընկա։ Ողը յես ձեռք չավեցի, իսկ նա տեղափոխվեց, ինչո՞ւ։ Վորովհետև յես պատահաբար եյի թափանվակը, իսկ նրա հետ միասին պտտվում եր և ողը։ Ինչպե՞ս է, վոր յես այդ մասին առաջ չեյի մտածել։

Բռնում եմ թափանվակից, պտտեցնում եմ և ցուցիչի դեմ դնում եմ ողի 4 խազը։ Տեսնում եմ նշանոցով, վոր գնդացիրը ճիշտ չե նշանադրված, ավելի ցածր է։ Սկսում եմ իջեցնել նշանոցը, և յերբ հարթ հատիկն ընկնում է նշանի տակ, տեսնում եմ, վոր նշանոցի ցուցիչի դիմաց նույնպես կանգնած է 4 թվանշանը։

Ահա այստեղ է, վոր յես իմացա, թե ինչ է նշանոցային ողը, և հասկացա, վոր գնդացրի նշանոցային ողը ծառայում է նրա համար, վորպեսզի հրաձգության ժամանակ

փոխենք գնդացրի ուղղահայաց նշանադրությունը, առանց փոխելու նշանոցը, իսկ այդ չափազանց կարևոր է հրաձգության հեռահարությունն արագ փոխելու համար, յերբ ժամանակ չկա նշանոցը փոխելու և գնդացիրը կրկին նշանադրելու համար։

ՁՐՈՒՑՑ ՁՈՐՐՈՐԴ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ, ՆՇԱՆԸ ՃԱՆԿԻ ՄԵՋ ԱՌՆԵԼՈՎ

Ինչպես ձեզ հայտնի է, տարածությունը մինչև հեռվում դասավորված նշանը վորոշելիս, կարելի է սխալվել։ Բացի դրանից, գնդակների հեռահարությունը կարող են փոխել քամին, ցուրտն ու չոգը։ Այդ պատճառով հարկավոր է լինում առաջ գտնել ճիշտ (իսկական) նշանոցը և ապա միայն այդ նշանոցով նշան դնելով՝ հարվածել նպատակները։

Հրաձգությամբ իսկական նշանոցը գտնելը կոչվում է՝ փորձնական հրաձգություն, իսկ գտած նշանոցով նշանոցի գնդակոծումը կոչվում է՝ հարվածման հրաձգություն։

Ինչպե՞ս կատարել փորձնական հրաձգությունը։ Դրա համար շատ յեղանակներ կան. քննենք առ այժմ այդ յեղանակներից մեկը, այն է՝ փորձնական հրաձգությունը՝ նշանը ճանկի մեջ առնելով։

1919 թվին հարավային ճակատում մեր

դումարտակին ուղարկված եր մի անգամ չբրջանցելու համար հակառակորդի ձախ թևը:

Մենք դուրս յեկանք լուսաբացին, իսկ յերբ լուսացավ, ելանք իսր ձորը: Քայլում եյինք կամաց, առանց խոսալու: Ձորում փոքր ինչ կանգ առանք, մինչև վոր հրամատարները դնացին հետախուզության, իսկ յես այդ միջոցին կարողացա արդեն լավ զննել ու ստուգել, թե արդյո՞ք սարքին ե իմ դնդացիրը. հետո սրբեցի զնդացրիս փոշին:

Յերբ սողալով ձորից բարձրացանք մի փոքր բարձունքի վրա, մեր առաջ բացվեց մարտի ամբողջ պատկերը (տես գծանկար 6-րդ): Մեզանից դեպի ձախ, բլրակների վրա, տեղ-տեղ դիտողությունից ծածկվելով փոքրիկ անտառակով մարտ եյին մղում մեր գնդի մասերը: Մենք դուրս յեկանք ուղիղ հակառակորդի ձախ թևի վրա, իսկ անտառակից դեպի աջ, ուղիղ մեր դիմաց դասավորված եյին հակառակորդի յերեք թեթև հրանոթները: Մենք մինչև անգամ տեսնում եյինք, թե ինչպես են աշխատում հրանոթների մոտ սպասարկողները, ինչպես են յետ դլորվում հրանոթների մարմինները: Հրանոթներն անտառակի վրայով ուժեղ կրակ եյին վարում մեր մասերի դեմ: Այդ կրակին եր հենց, ինչպես հետո ինձ հաղորդեցին, վոր չեր թողնում մեր մասերին առաջ շարժվել:

Գումարտակի հրաձգային դասակները դուրս յեկան յերման կեսերը, մեր զնդացրա-

յին դասակը խնդիր ստացավ ստիպել հակառակորդի մարտկոցին լռել:



Նկ. 6-րդ: Տեղանքի և մարտի սխեման:

Իմ գնդացիրն ու մեր դասակի յերկրորդ գնդացիրը դասավորված եյին դասակի հրամատարի հրամատարության տակ մի մի յանցից մի յերեսուն քայլ հեռավորության վրա, հենց դաշտի ծայրին հաճարի արտի մեջ: Դասակի հրամատարը հրամայեց դիտողին վորոշել տարածությունը մինչև նշանը, իսկ ինքն սկսեց ուշադրությամբ դիտել յերկդիտակով:

— Ընկեր Սմելով,—դիմեց նա ինձ,— վորոշեցեք տարածությունը մինչև միջին հրանոթը:

Ցես արդեն վաղուց մտքումս վորոշել եյի այդ տարածությունը (բոլորն էլ դոնում ենյին, վոր յես լավ աչքաչափ ունեմ), ուստի միանգամից պատասխանեցի՝ «23»:

Դիտողը կանչեց՝ «25»: Հրամանը տրվեց՝ «24, ուղղանը 0, նշան դնել միջին հրանոթի մեջտեղի տակ: Փորձնական հրաձգություն հերթերով 20 փամփշտից»:

Ցես և իմ հարևան նշանառուն անմիջապես և ճշտությամբ կատարեցինք հրամանը: 2-րդ համարը պատրաստեց ժապավենը, յես լցրի գնդացիրը, նշանոցը դրեցի 24-ի վրա, ուղղանը 0-ի, նշան դրեցի գնդացիրը, ամրացրի մեխանիզմները և ասացի 2-րդ համարին՝ «Պատրաստ ե»: Նա դրեց ոդը 24-ի վրա, բարձրացրեց ձեռքը և գոչեց՝ «1-ին գնդացիրը պատրաստ»:

Լսում ենք, վոր 2-րդ գնդացիրն էլ ե պատրաստ: Հրամատարը հրաման տվեց՝ «1-ին գնդացիր, հերթ»:

Սեղմում եմ վայրիջույց լծակին և մատածում անդրանցում ե լինելու (գնդակներն ավելի հեռուն են թռչելու): Արձակեցի մի հերթ, մեկ էլ լսեմ դիտողը կանչում ե՝ «չհասում»: Ցես չեյի հավատում ականջներիս: Հետո միայն գլխի ընկա, վոր տեղանքը չափազանց հարթ ե, ուստի յես սխալվել եմ

տարածությունը հաշվելիս, ավելի փոքր տարածություն կարծելով:

Նորից լսում եմ հրամանը՝ «Ոդով հառաջ 2»: Այստեղ 2-րդ համարն արագ թուլացրեց նուրբ նշանառության մեխանիզմը, պատացնելով թափանվակն ոդով դրեց 26, արագ ամրացրեց մեխանիզմը և զեկուցեց. «Պատրաստ ե»:

2-րդ գնդացիրն այդ միջոցին նույնն ե արել, ինչ և մենք և նույնպես հաղորդեց պատրաստ լինելու մասին:

— 1-ին գնդացիր, հերթ,—կանչեց հրամատարը:

Ցես նորից արձակեցի 20 փամփուշտ, իսկ դիտողը ձայն տվեց՝ «Անդրանցում»: Այդ նշանակում ե, վոր մենք միանգամից ճանկի մեջ եյինք առել նշանը:

Ցերկրորդ համարը թուլացրեց նուրբ նշանառության թափանվակը և դրեց ոդով 25: Ցես ձախ ձեռքով արագ թուլացրի ցրող մեխանիզմը և ասացի յերկրորդ համարին՝ «Պատրաստ»: Նա ամրացրեց վերամբարձ մեխանիզմը և զեկուցեց հրամատարին, բարձրացնելով ձեռքը՝ «1-ին գնդացիրը պատրաստ»:

— 1ին գնդացիր, կրակ:

Գնդացիրը գործել սկսեց:

Իհարկե, յեթե հարկավոր չլիներ վորքան հնարավոր ե արագ հարվածել նշանը, դասակի հրամատարը հրաման կտար՝ «25, ուղղանը 0, նշանադրել նշանի տակ»: Այն ժամանակ

ավելի հարմար կլիներ հարվածելու կրակ վարել ցրումով: Բայց մենք չէինք կարող ժամանակ կորցնել:

Խոստովանանք լինի, կրակ բանալիս յես վախենում էի, վոր հրանոթները մեզ ավելի շուտ վեր կգցեն, կտապալեն, քան թե մենք նրանց: Բայց բարեբախտաբար մեր հրաձգությունը հրանոթներին հանկարծակիի բերեց, և հրանոթների սպասավորները ժամանակ չունեցան փոխելու իրենց թնդանոթների ուղղությունը, այսինքն՝ չկարողացան հրանոթները մեր դեմ դարձնել: Ցերեկի նրանք մինչև անգամ չկարողացան ճիշտ վորոշել մեր դասավորությունը, վորովհետև մենք լավ էինք քողարկված:

Հետևում եմ նշանառության դժին և տեսնեմ, ձորակից հրանոթների յետևից թափով սլանում են հրանոթային քարշակները. ուզում էին տանել, հեռացնել հրանոթները:

— Զե,—մտածում եմ,—էլ մեզանից դուք չեք փախչի ու մեր ձեռքից չեք պրծնի:

Ցեվ իրոք մեր ձեռքից չպրծան: Մենք անընդհատ դնդակոծում էինք սպիտակների հրանոթները, ուստի նրանց քարշակներն էլ ընկան մեր ձիգերի խուրձի տակ: Մի քանի ձի վիրավորվեցին, մնացածները փախան, կտրատելով ձգափոկերը, և հետո մենք նրանց բռնեցինք դաշտում:

Այդպիսով մենք վոչ միայն ստիպեցինք

հրանոթներին լռել, այլև հնարավորություն չտվեցինք նրանց փախցնելու դիրքերից:

Ինչո՞վ էր այդ մարտում դնդացրային հրաձգությունը տարբերվում այն դեպքերից, վորը մենք առաջ քննել էինք:

Գլխավոր տարբերությունն այն է, վոր մենք այստեղ փորձնական հրաձգություն էինք կատարել:

Ինչի՞ համար են կատարում փորձնական հրաձգությունը:

Վորպեսզի նշանը հարվածելու համար գտնենք ճիշտ նշանոցը, այսինքն՝ այնպիսի նշանոց, վորով կարելի յե հարվածել նշանը: Իսկ ի՞նչ է արվում փորձնական հրաձգության ժամանակ:

Նախ քան փորձնական հրաձգություն սկսելը, հրամատարը, ինչպես հիշում եք, չափազանց խնամքով վորոշեց մինչև նշանը յեղած տարածությունը: Մենք տարածությունը վորոշեցինք աչքաչափով: Այդ պատճառով հրամատարը վորոշեց տեղեկություններ ունենալ 2–3 հոգուց և վերցրեց միջին թիվը, իսկ այնուհետև ճշտում վերցրեց հակընդդեմ քամու համար:

Մեր հրամատարը պաշարով մարդ էր և միշտ էլ իր հետ ունենում էր Ֆիլատովի քանոնը: Այդ քանոնի վրա կա շղթի և քամու համար բոլոր ճշտումները:

Ճշտումներով տարածությունը վորոշելը հրամատարական գործ է:

Տեսնենք, թե ինչպես են փորձնական հրաձգության ժամանակ աշխատում համարները: Նշանոցի առաջին հատման ժամանակ, ինչպես դուք յերևի ուշադրություն դարձրիք, յերկրորդ համարը հատեց ողը, վերցնելով ողը և պատելով ձեռքով մինչև այն խաղը, որը տրված եր հրամանով նշանոցի համար (հրամատարը հրաման տվեց՝ 24):

Այնուհետև հրամանը վերաբերում եր ողին, իսկ այդ նշանակում է, որ հրաձգության հեռահարությունը փոխվում է ողով: Յերկրորդ համարը պատեցնում եր նորը նշանառության թափանվակը, առանց ձեռք տալու ողը: Նա ցուցիչի դիմաց դրեց նախնական ողի հատումից ավելի կամ պակաս խաղեր, ըստ տված հրամանի: Սկզբում նա ողը հատեց 24-ի վրա: Յերբ հրաման տրվեց՝ «Ողով 2 առաջ», նա ողը դրեց 26-ի վրա: Իսկ յերբ դրանից հետո հրաման տրվեց՝ «Ողով մեկ յետ», նա դրեց 25-ի վրա:

Կանոնագիրքն ասում է, և փորձն ել հաստատում է, որ առաջին իսկ հնարավորության դեպքում նշանոցի հատումը պետք է համաձայնեցնել նշանոցային ողի հատման հետ:

Այդ մասին պետք է մտածի ինքը նշանառուն, առանց սպասելու, որ հրամատարն այդ մասին ասի նրան: Հարմար առիթ յեղավ, դեր նշանոցն ըստ ողի, ավելի հարմար կլինի ստուգել նշանառությունը և ցրումը:

ԶՐՈՒՅՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ ՄՈՏԵՑՈՒՄՈՎ, ԱՆԸՆԴՀԱՏ ԿՐԱԿՈՎ

1921 թվին յես ծառայում եյի Ուկրաինայում թռուցիկ ջոկատներից մեկում, որոնք կազմակերպված եյին կռվելու համար զանազան բանդաների դեմ:

Մի անգամ ամառը մեր ջոկատը հրաման ստացավ շարժվել և կտրել մի բանդայի ճանապարհը: Այդ բանդան շարժվում եր դեպի Միխայլովկա գյուղի կողմը, որտեղ և մեր հաշվով պետք է հարձակվեյինք բանդիտների վրա: Ուղարկեցինք հեծյալ հետախուզություն, մենք նույնպես մեկնեցինք: Մի քանի ժամ անց զեկուցագիրը ստացանք, որ բանդիտները կանգ են առել հանգստանալու Միխայլովսկի փոքրիկ ագարակում, և մեր ջոկատը կամաց-կամաց շրջապատեց այդ ագարակը կիսաշրջանով:

Իմ գնդացիրը դրված եր ձախ թևի վրա և հատուկ պատվեր եր ստացել՝ կտրել բանդայի ճանապարհը, յերբ նա դուրս կգա ագարակից: Ագարակը գտնվում եր խոր ձորում, իսկ գնդացիրը դասավորվեց ձորի բարձր յեզրին, այնպես որ ամբողջ ագարակը մեր աչքի առաջին եր, նրա բոլոր ճանապարհները պարզ յերևում եյին մեզ (տես նկար 7-րդ):

Տեղի ունեցավ կարճատև մարտ, ու բանդան սկսեց ծլկել:

Յետ պարզ տեսնում էր, վոր բանդիտները զորասյունով սկսում են բարձրանալ սարնիվեր։ Այդ զորասյունում կային հարյուրի չափ ձիավորներ, մի հարյուր հիսուն հետեակ, մի տասը հատ էլ սայլ։

Սիրտս անմիջապես սկսեց բաբախել. սքանչելի նշան է. այ թե կարելի է լավ դղե՛լ։ Իսկ ինքս, առանց ուշացնելու գնդացիրս դարձնում եմ զորասյունի դեմ։ Հենց նույն վայրկյանին լսում եմ հրամանը.



Նկար 7։ Մարտաղաչը Միխայլովսկի ագարակի տակ։

— Բանդան ագարակից դուրս ճամբին է, 16, ուղղան ձախ՝ 9 (չափավոր քամի յեր ձախից), նշան բռնել զորասյունի տակ մեջտեղից։ Փորձնական հրաձգություն մոտեցումով։

Յետ բոպեյապես դրեցի նշանոցը, մի ակընթարթում աջ ձեռքս դրեցի նուրբ նշանառության թափանվակի վրա, բռնեցի ամբողջ ափովս և սկսեցի հարթ հատիկ տալ բանդիտների զորասյունի տակ մեջտեղի տակ։ Գնդացրի ճիշտ ուղղությունը,—հորիզոնական նշանառությունը,—յես արդեն ավել եյի հրամանից առաջ։

Յերբ գնդացիրը նշանադրված եր, յես բարձրացրի պահպանակը, նրա տակ անց կացրի վայրիջուցյ լծակը, իսկ այդ միջոցին յերկբոցդ համարն արդեն հաստում եր ողը նցանոցով, այսինքն՝ նշանոցային ողի պատուհանին դրեց 16 թվանշանն այնպես, վոր պատուհանի խազը յեկավ ողի բաժանման 16-րդ խազի դեմ։

Յերբ յես հայտնեցի յերկբոցդ համարին՝ «Պատրաստ», նա զեկուցեց հրամատարին՝ «Գնդացիրը պատրաստ»։

Լսելով, վոր գնդացիրը պատրաստ է, հրամատարը հրաման տվեց՝ «Կրա՛կ», և յես ձախ ձեռքով սեղմեցի վայրիջուցյ լծակին, իսկ աջ ձեռքով դանդաղ և սահուն սկսեցի թափանվակը պտտել գեպի ինձ։

Նայում են նշանին և տեսնում եմ՝ ինչպես են իմ գնդացրի գնդակները խփում ճանապարհին՝ փոշի բարձրացնելով, և յուրաքանչյուր բոպե ավելի ու ավելի յեն մոտեցումով։

նում բանդիտների զորությունին։ Մի ակնթարթ ևս և գնդակների խուրձը ծածկեց բանդիտների զորությունը։ Թե ինչ տեղի ունեցավ այդ վայրկյանին, դժվար է պատմել։

Փոշին սյունի պես բարձրացել է... բանդիտները վազվզում են այս ու այն կողմ—մարդիկ, ձիերը, սայլերը խառնվել են իրար...

Լսում եմ հրամանը՝ «Կա՛ց»—Ցերկրորդ համարը գոչում է՝ «Ող 20»։ Այդ նշանակում է, որ յես պտտելով դեպի ինձ թափանվակը, հրաձգության հեռահարությունը 1600 քայլից հասցրել եմ 2000-ի։

— Բանդայի դեմ, 20,—լսում եմ կրկին հրամանը,—ցրումով նշանի լայնությամբ, Ողի յերկու խազ խորությամբ, կրա՛կ...

Յես դնում եմ 20 նշանոցը, թուլացնում եմ ցրող մեխանիզմի գնդերիթը, նշան եմ դնում գնդացիրը նշանի ձախ յեզրին (նշանը չափազանց լայն եր. բանդիտներն արդեն ցրվել եյին ամբողջ դաշտով մեկ, ձիավորներն ամբողջ ուժով արշավում եյին առաջ, սայլերը նույնպես գլուխ առած թռչում եյին դաշտով)։ Բացում եմ կրակը, սահուն կերպով գնդացիրը դարձնելով դեպի աջ՝ ծոծրակալի կոթուններից բռնած։ Ցերկրորդ համարն աշխատում է նույնը նշանառության թափանվակի վրա, յես ու առաջ տալով նրան 20 և 22 խազերի միջև։ Հրամատարն ինձ խրախուսում է։

Շուտով ամբողջ ժապավենն արձակել եյի։ Մինչև յես կրկին լցնում եյի գնդացիրս նոր ժապավենով, բանդիտները շատ հեռու եյին գնացել և ավելի ևս շատ ցրվել դաշտում։ Մենք դադարեցրինք կրակը։

Ուշադրություն դարձրեք, որ առաջին հրամանը տրված եր նշանոցը 16-ի վրա հասցնելու մասին, այսինքն՝ 1600 քայլի համար, մինչդեռ մինչև նշանը 2000 քայլ եր։

Գուցե դուք կարծում եք, որ հրամատարը սխալվեց և վատ վորոշե՞ց տարածությունը։ Ամենևին վոչ։ Բանը նրանումն է, որ մեր հրամատարը ճիշտ եր վորոշել տարածությունը մինչև նշանը 2000 քայլ։ Բայց վորպեսզի ավելի արագ և ավելի հաստատապես հարվածի հեռացող նշանը, նա վորոշեց փորձնական հրաձգություն կատարել մոտեցումով, իսկ դրա համար կանոնադրքով պահանջվում է նշանոցը դնել համապատասխան թվացող տարածությունից 4 խազ ցած։ Այդ արվում է նրա համար, վորպեսզի գնդակների դեմին ընկնելով, տեսնել, թե ինչպես է գնդակների խուրձը մոտենում նշանին։ Իհարկե, նման հրաձգությունը կարելի յե կատարել այնպիսի տեղանքում, վոր թույլ է տալիս տեսնել, թե ինչպես են ընկնում գնդակները (որինակ՝ ճանապարհ, ավազոտ տեղ, հերկած դաշտ և այլն), վորպիսին հենց մեր տեղանքն եր։ Պետք է ասել, վոր փորձնական հրաձգության նման յեղա-

նակը գործադրվում է բացառիկ դեպքերում, վորովհետև նա փամփուշտների մեծ ծախք է պահանջում, հակառակորդի դիտողներին հընարավորություն է տալիս հայտաբերելու գնդացրի տեղը և պահանջում է նշանառուից ճարպիորեն տիրապետել մեխանիզմներին և մեծ զգաստություն ունենալ:

Այդ է ահա փորձնական հրաձգությունը մատեցումով: Թե յերբ և ինչպես պետք է կատարել այդպիսի հրաձգություն, դուք արդեն գիտեք, ուստի ուշադրություն դարձնենք, թե ինչպես են այդ հրաձգության ժամանակ աշխատում գնդացրորդները: Սկզբում՝ նշանառուն հրամանով գնդացիրը նշանադրեց նրպատակին, իսկ յերկրորդ համարը, իհարկե, դրել էր ողը նշանոցով:

Այնուհետև՝ նշանառուն ամրացրեց ցրող հարմարանքը, սեղմեց վայրկյանց լծակին միայն ձախ ձեռքով, իսկ աջ ձեռքով դանդաղ և սահուն դեպի իրեն դարձրեց նուրբ նշանառության թռափանվակը:

«Կա՛ց» հրամանով, վորը տվել էր հրամատարը, յերբ ձիգերի խուրձը ծածկեց նշանը, 2-րդ համարը պետք է զեկուցեր նշանոցային ողի հասատման մասին: Դրանից հետո հրամատարն անցավ հարվածման հրաձգության: Նա պետք է դրա հետ միասին կանոնադրքով պահանջներ նշանոցային ողի հասատումը մի խազով: Ինչո՞ւ, վորովհետև այդ նշտուռն արդեն ինքը նշանը: Հիշում եք, վոր բանդիտ-

ների զորասյունը փախչում էր մեզանից, ուրեմն միջի տարածությունն ավելանում էր, ուստի և հարկ չկար փորձնական հրաձգությունից ստացած նշանոցը պահպանելու:

ՉՐՈՒՑՑ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀՐԱՁԳՈՒԹՑՈՒՆՆ ԻՐԵՆՑ ԶՈՐՔԻ ԳԼԽԻ ՎՐԱՅՈՎ

Քաղաքացիական պատերազմի ժամանակ, ընկերներ, մենք հաճախ ստիպված եյինք լինում կրակ վարել վոչ միայն սովորական ձեվերով, այլև մեր զորքերի գլխի վրայով: Այդպիսի դեպքերից մեկի մասին է, վոր յես ուզում եմ ձեզ պատմել:

Մի անգամ 1920 թվին, հարավային ճակատում, Վոլնյանկա գյուղի տակ, մեր զորամասերը դուրս քշեցին սպիտակներին իրենց դիրքերից, բայց հանկարծ դեմ առան յերկրորդ ամրացված գծին: Տեղի ունեցավ կատեցում, վորը մեր առաջխաղացման համար շատ ծանր եր, քանի վոր յերկրորդ գծի վրա մեր հարձակվող վաշտերն իրենց թիրը դեմ էին արել հակառակորդին: Հակառակորդն էլ, իհարկե, ոգտվեց դրանից և ուժեղ կրակ բացեց մեր 1-ին գումարտակի վաշտերի ձախ թևի դեմ: Վոչ միայն առաջ չարժվել, այլ մինչև անգամ գլուխ բարձրացնել չեր լինում, և շարժումն ակամայից կանգ առավ:

Մեր գնդացրային վաշտի հրամատարը հրամայեց յերկու դասակների հրամատարներին,—և պետք է ձեզ ասել, վոր յերկուսով էլ մարտական հրամատարներ էին,—անցնել առաջին դումարտակի թեը, այնտեղից կրակ բանալ հակառակորդի թեի վրա և ստիպել նրան դադարեցնել կրակը (տես նկար 8-ը):

Դժվար որեր շատ եյինք տեսել քաղաքացիական պատերազմում, բայց այդ տեղաշարժումից ավելի դժվարը, կարծեմ, մենք չենք տեսել: Հարկավոր եր շարժվել արագ, իսկ գնդակներն ու արկերը տեղում եյին կարկտի պես: Ամբողջ հասակով մեկ շարժվելու մասին խոսք էլ չեր կարող լինել: Մենք սողալով անցնում եյինք առուներով, թփերով, փորերի, արմունկների վրա: Քիչ եր մնում ատամներով կառչեյինք գետնից... Ձեռքերս ճանդռոտված եյին և արյունչաղախ, մերկ ծնկներիս վրա սողալով տեղ հասա: Ճանապարհին վիրավորեցին մեր յերկու վտամփեշտակիրներին: Տուփերն ստիպված յեղան քարշ տալ մյուսները: Ինձ էլ, մյուսներին էլ թվում եր, վոր մենք արդեն սողում ենք յերկու ժամ. մինչդեռ աջ թեն անցնելու համար մենք կորցրել եյինք ընդամենը 15-20 րոպե:

Յերբ մեր դասակները դուրս յեկան դումարտակի աջ թեը, դրությունները մի քիչ ավելի հեշտացավ. կրակն ավելի թույլ եր, տեղանքն էլ ծածկում եր մեզ կրակից: Մենք դուրս յեկանք մեր դումարտակի թեը, վորը

միևնույն ժամանակ և հակառակորդի թեն եր: Դասակների հրամատարները սողալով դուրս յեկան բլրակի վրա, վորպեսզի ընտրեն գնդացրերի համար տեղը: Ուղիղ մեր առջևում գտնվում եյին մեր զորամասերը: Առաջ շարժվել նշանակում եր կորատի մատնել մեր գնդացրերը և չկատարել խնդիրը:



Նկ. 8. Ինչպես եր կատարվում հրամայությունը մեր զորքերի դլխի վրայով:

Հրամատարները մտածում եյին ինչ-վոր բանի մասին, և յես լսեցի այսպիսի կարգադրություն.

«Ստուգել հատուցների կայունությունը և հատուցի ամրացումը գնդացրի մարմնի հետ. զեկուցել, թե վորքան գնդակ է արձակված այն փողերից, վորից այժմ կրակ ենք վարում»:

Յես 2-րդ համարի հետ միասին արագ ստուգեցի հաստոցի կայունությունը։ Հաստոցը սարքին եր. մեռյալ ընթացքը չնչին եր։ Ստուգեցինք գնդերիթները. հարկավորվեց նուրբ նշանառության մեխանիզմի վրա փոքր ինչ խծուծ փաթաթել, վերացնելու համար գնդացրի ճոճումը։ Յես զեկուցում եմ՝ «Հաստոցը կայուն է. փողից արձակված է 4000 փամփուշտ (այդ յես հիշում եմ, վորովհետև գնդացրի վիճակագիրը մեզանում տարվում եր մեծ խնամքով և ճշտապահությամբ)»։ Այդ ամենի մասին զեկուցեցին և մյուս ընկերներս։

Դրանից հետո լսում ենք հրամանը՝ «Առաջ քաշել գնդացիրը բլրակի վրա, հասցնել գնդացիրը վորքան կարելի յե կայուն»։

Յես գնդացրիս համար տեղն ընտրեցի վորքան կարելի յե ամուր և հարթ, մաքրեցի հողն այնպես, վոր հաստոցի անիվները կանգնեն գետնին հաստատ, հաստոցի առատամի խոփիկը մի լավ խփեցի հողի մեջ, և բացի դրանից, առատամի աջ ու ձախ ոտքերը վերևից սեղմեցի ճիմի կտորներով։ Այդ միևնույն ժամանակ և կայունություն եր տալիս հաստոցին և՛ հենարան՝ արմուկներին։ Առատամի ոտքերի միջև տարածությունն ազատ եր. ուրեմն՝ կարելի յեր աշխատել նուրբ նշանառության թափանվակով։

Յես զեկուցեցի հրամատարին, վոր գընդացիրը հաստված է։ Լսում եմ հրամանը՝ «Հակառակորդի խրամատների դեմ, ավելված տան մոտ, 14, նշանադրել հակառակորդի գնդացրին»։ Յես առաջ քաշեցի գնդացիրս, լցրի, նշան բռնեցի և աչքերիս չեյի հավատում, ինչպես կարելի յե կրակել, յերբ մեր առջևում մի 600 քայլի վրա դասավորված է մեր ամբողջ վաշտը։ Ճիշտ է, մենք ամբողջ 2 մետր ավելի բարձր եյինք մեր վաշտից, դասավորված եյինք բլրակի վրա։ Բացի դրանից, տեղանքը, գնալով, իջնում եր դեպի հակառակորդը, իսկ նրա խրամատների գիծը բարձունքի վրա յեր։ Այժմ հո մենք բոլորս գիտենք, վոր մեր զորքերի գլխի վրայով կարելի յե կրակել միայն այն դեպքում, յերբ կարելի յե, իրենց զորքերին վնաս չպատճառելով, գնդակների խուրձը տեղափոխել հակառակորդի վրա։

Յուրաքանչյուր հրամատար այժմ այդ կկարողանա հաշվել։ Բայց այն ժամանակ, վորի մասին յես ձեզ հետ խոսում եմ, յես դեռ վատ եյի ըմբռնում այն, թե ինչպես է թռչում գնդակը, ինչո՞ւ և վո՞ր որենքներով է գոյանում գնդակների խուրձը։ Զգիտեյի նույնպես, վոր կարելի յե իրենց զորքերի գլխի վրայով կրակել։ Բայց յես անչափ եյի հավատում հրամատարիս, և մտածում եյի, վոր յեթե նա վորոշել է, կրակել, ուրեմն վոչ մի սխալ չի կարող լինել և կարելի յե կրակել։

Այդ ամբողջն անցավ իմ մաքով չափազանց արագ, և յես աշխատանքս չընդհատեցի վոչ մի բոպե, թեև աշխատելը դժվար եր։

Հենց նոր էլի նշան դրել գնդացիրս, յերբ լսում եմ դասակի հրամատարը գոչում է՝ «Ստուգել վերամբարձ մեխանիզմի ամրացման ճշտությունն ու հուսալիությունը»: Յես նայեցի և համոզվեցի, որ մեխանիզմն ամրացված է անթերի: Տեսնեմ, ինքը դասակի հրամատարն է սողալով մոտենում և ստուգում գնդացրերը, թեև մենք վաղուց էլինք նրան հայտնել, որ գնդացրերը պատրաստ են կրակ բանալու: Միայն ստուգելուց հետո, նա յերկդիտակն աչքերին դրեց և հրամայեց՝ «Յրող մեխանիզմը չամրացնել: Կրա՛կ»:

Հակառակորդի խրամատների վրա գիպումներն ստացվեցին շատ լավ: Սակավ դեպքերում է հաջողվում այդչափ լավ գուշակել նշանոցը: Տեսնում ենք, որ մեր կրակը վոչ միայն ներգործում է հակառակորդի վրա, այլև առջևում գտնվող մեր զրամասերը, կարծես, չչմեցին, յերբ մեր գընդակները սուլեցին նրանց գլխի վրայով: Իսկ գնդացրերն աշխատում են անընդհատ, հարվածում են խրամատները, չեն թողնում, սպիտակների վո՛չ հրաձիգներին և վո՛չ էլ գնդացրորդներին գլուխ բարձրացնել:

Պարզ է, որ յերբ գործն այդպիսի ընթացք ստացավ, հակառակորդի կրակն սկսեց արագ թուլանալ: Միայն այդ ժամանակ մենք հասկացանք, թե ինչումն է բանը և, առանց մի բոպե կորցնելու, արագ առաջ շարժվեցինք և ապա գրոհի անցանք:

Մեր դասակի հրամատարն ուշի-ուշով հետևում էր դրան և հենց վոր մեր առաջավոր մարտիկները մոտեցան այն բլրակին, վոր դրավել էին սպիտակները, հրամայեց՝ «Կա՛ց, պարպի՛ր»: Կրակելն արդեն վտանգավոր էր, մենք կարող էլինք հարվածել մերոնց:

Մարտը վերջացավ սպիտակների նահանջով: Իսկ ոժանդակում, յերբ ազատ բոպե ունեցանք, դասակի հրամատարը պատմեց մեզ, թե ինչպես պետք է հաշիվներն տնել, յերբ անհրաժեշտ է լինում կրակել մեր զորքերի գլխի վրայով:

— Սկսենք պարզից,—ասաց նա ինձ, ցույց տալով հեռվում գտնվող գյուղը:— Յենթադրենք, որ մենք կրակում ենք այդ գյուղի դեմ, իսկ մեր զորքերը գտնվում են այդ գյուղի և մեր արանքում: Ի՞նչ կասեք դուք այս տեղանքի մասին:

— Այստեղ տափաստան է, ընկեր հրամատար, մի խոսքով՝ տեղանքը հարթ է սեղանի պես:

— Ահա,—շարունակեց նա,—այդպիսի տեղանքում հաշիվը չափազանց պարզ է: Մեզ հարկավոր է գնդակների խուրձը տեղափոխել մեր զորքերի գլխի վրայով: Յեթե մենք գընդակներն արձակենք փոքր նշանոցով, հաստատապես կվնասենք մերոնց և գործներս կվչացնենք: Ուրեմն մեր զորքերի գլխի վրայով ամեն նշանոցով կրակել չի կարելի: Այդ

պատճառով էլ հաստատված է հարթ տեղանքում իրենց զորքերի գլխի վրայով կրակելու նվազագույն նշանոցը—16։ Իսկ դուք հիշո՞ւմ եք, որ մեր նշանոցը մարտում 14 էր։ Ինչո՞ւ ուրեմն յես սիրտ արեցի այնուամենայնիվ կրակել մեր զորքերի գլխի վրայով։

— Կարծում եմ, ընկեր հրամատար, այն պատճառով, որ մեր և ապիտակների միջև ընկած էր խոր ձորակ (տես նկարը)։

— Ճիշտ է, ընկ. Սմելով։ Այդ պատճառով էլ 16 նշանոցը հաստատված է այնպիսի հարթ տեղանքի համար, ինչպիսին այս է։

— Այդ առաջինը։ Հետո գնդացրից արձակած գնդակների խուրձով յուրայիններին չհարվածելու համար հարկավոր է մյուս կողմից էլ ապահովել մեր զորքերին։ Կրակող գնդացիրը պետք է հեռու գտնվի առջևում յեղած իր զորքերից վոչ պակաս, քան 400 քայլ (տես նկարը)։ Այսինքն՝ պետք է ապահովության մի վորոշ տարածություն լինի։ Յերբ գնդակների խուրձն սկսեց հնձել հակառակորդին, նա չի խնայի նաև մեր զորքերին, յեթե սրանք շատ արագ մոտենան։ Այստեղ էլ նույնպես պետք է ապահովման տարածություն։

Կանոն կա, որ հարթ տեղանքում չի կարելի կրակել այն դեպքում, յերբ մեր զորքերը մոտեցել են հակառակորդին 500 քայլից ավելի մոտ։ Իսկ Վոլնյանկա գյուղի տակ տեղի ունեցած մարտում յես մեր զորքերին բաց թողեցի մոտ 300 քայլի վրա։ Ինչո՞ւ։ Դարձյալ այն պատճառով, որ տեղանքը հարթ չէր, մեր զորքերն առաջ եյին շարժվում ձորակով, իսկ մենք գտնվում եյինք բլրակի վրա։

«Ապահովման տարածությունը»։ Գծիկներով ստվերված է այն տարածությունը վորտեղ գլխի վրայով հրաձգության ժամանակ մեր զորքերը չպետք է գտնվեն։ Հաստ սև գծով ցույց է տրված այն տարածությունը, վորտեղ գնդակները դատավորվում են ամենից խիտ (խուրձի միջուկը)։ Բարակ գծերով նշված է նոսր գնդակների (ձիգերի խուրձի) սահմանները։

— Մի պայման էլ կա մեր զորքերի գլխի վրայով կրակելու համար։ Հարկավոր է, որ նշանառության գիծն անցնի վոչ ցածր, քան



Նկ. 10. Ինչպես էլ Սմելովը կրակ վարում Վոլնյանկա գյուղի տակ։

մեր զորքերի գլուխներն են, յեթե վոչ թվածս բոլոր կանոնները բանի պետք չեն լինի:

Մարտում դուք տեսաք, վոր յերբ տեղանքն անհարթ է, կանոններն էլ փոխվում են,—միայն թե ամեն անգամ պետք է մտածել այն մասին, վորպեսզի չվնասեն յուրայիններին: Իսկ պետք է ասել, վոր հարթ տեղանքում կրակելը շատ սակավ դեպքերում կպատահի: Ամենից հաճախ հարկավոր կլինի կրակը վարել բարձունքներից, և այդ դեպքերում լայն հնարավորություններ են տրվում նկարագրածս հրաձգության համար:

Վերջապես՝ դուք հիշում եք, վոր հրաձգությունից առաջ յես հրամայեցի ձեզ ստուգել հասատոցների կայունությունը, իսկ հետո հասատելուց և ամրացնելուց հետո, ինքս սողալով մոտեցա և ստուգեցի, թե լավ է արդյոք ամրացված վերամբարձ մեխանիզմը և կայո՞ւն է արդյոք գնդացրի հասատումը: Բանը նրանումն է, վոր գլխի վրայով հրաձգության ժամանակ առանձնապես կարևոր է ունենալ գնդացրի սարքին նյութական մաս և կայուն, չճոճվող հասատոց:

Ձես չնորհակալություն հայտնեցի հրամատարին բացատրության համար և աշխատեցի հասատատպես հիշել այդ կանոնները: Նրանք ինձ պետք են յեկել, պետք կգան և ձեզ, վորովհետև այժմ, յերբ մարտական կարգերը մասնատվում են ճակատով ու խորությամբ, իրենց զորքերի գլխի վրայով հրաձգությունը սովորական դարձ կլինի, և, ի հարկե, չպետք է վախենալ, յերբ մեր գլխավերևում կերգեն մեր գնդակները: Այսպիսի հրաձգությունը միանգամայն անվտանգ է մեզ համար, յեթե պահպանվում են այդ դեպքի համար անհրաժեշտ պայմանները:

Ահա այդ պայմաններն են, վոր մենք կքննենք հիմա:

Նախ՝ գնդացրի նյութական մասը պետք է միանգամայն սարքին լինի. դուք հիշում եք, վոր հրամատարն աշխատում եր ինքը համոզվել դրանում: Յեթե մեր գնդացրի փողը մաշված լիներ (այսինքն՝ նրանից 10.000 գնդակից ավելի արձակված լիներ), այն ժամանակ գնդացիրը պետքական չեր լինի այդպիսի հրաձգության համար:

Իսկ վորտեղի՞ց նշանատուն գիտե, թե փողից վորքան գնդակ է արձակված:

Այդ նա պետք է իմանա գնդացրի վիճակագրից, վորը միշտ էլ պետք է տարվի շատ խնամքով, և այնտեղ գրվում է յուրաքանչյուր հրաձգություն: Ուրեմն և հայտնի յե ձիգերի թիվը:

Բացի դրանից, փողն ու հասատոցը չպետք է ճոճվեն: Յեթե դրա վրա ուշադրություն չդարձնենք, կարող ենք հարվածել մերոնց:

Այնուհետև՝ գնդացիրը, ինչպես գիտեք, հասատեցինք շատ ամուր: Մենք արձակեցինք միայն յերկու ժապավեն, իսկ յեթե ավելին կրակելու լինեյինք պետք է փոխեյինք ջուրը:

Բայի դրանից, կանոնագիրքն ասում է, վոր փամփուշտները պետք է լինեն լավ վրակի։ Մենք կրակում էինք բլրակից և բլրակի դեմ. իսկ յեթե հարկավոր լիներ հարթ տեղանքում, այն ժամանակ հարկավոր է պահպանել հետևյալ կանոնները, վորը և դուք պետք է հիշեք։

Ամենակարճ տարածությունը, վորից կարելի յե հրաձգություն վարել մեր զորքերի գլխի վրայից, առանց վախենալու, թե կարող են վնասվել մերոնք, այդ կլինի 1600 քայլը, իսկ կրակող գնդացիրը պետք է գտնվի մեր զորքերից առնվազն 400 քայլի վրա։

Հրաձգությունը կարող են վարել այնքան ժամանակ, մինչև վոր մեր զորքերը կմոտենան գնդակոծվող նշանին մինչև 500 քայլի վրա։

Այս բոլոր հաշվառքները մեր հրաձգության համար արավ ինքը հրամատարը։ Հանեց Ֆիլատովի քանոնը և նրանով էր աշխատում ամբողջ ժամանակ։ Այդ քանոնի վրա կան բոլոր անհրաժեշտ տեղեկություններն այդպիսի հրաձգության համար։

Հրամատարը լավ հաշվեց, բայց հրաձգության ժամանակ համարներն էլ սքանչելի էին աշխատում. հրամատարի հրամաններն ու կարգադրությունները կատարում էին արագ, ճշտությամբ և ջանասիրությամբ. հաջողությունն էլ ձեռք է բերվում բոլոր դնդացրորդների համերաշխ աշխատանքով։

ԶՐՈՒՅՑ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԶՈՐՔԵՐԻ ՄԻՋԱՆՑՆԵՐԻՑ, ՀԱՄԱՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ՅԵՎ ԿՐԱԿԱՅԻՆ ԿԵՏԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Անցյալ անգամ մենք խոսեցինք մեր զորքերի գլխի վրայով կատարած հրաձգությունների մասին։ Բայց հրաձգություն վարել կարելի յե նաև մեր զորքերի միջանցներից։ Այդ առթիվ յես հիշում եմ մի գեպք սպիտակ լեհերի դեմ մղած պատերազմից։

Անցքը տեղի ուներ Բուգ գետի վրա։ Մեր գունդն այն ժամանակ գրավում էր Կլադնև գյուղը։ Գյուղի առջևում մի անտառակ կար. իսկ գետի այդ անտառակը Բուգ գետի վրայով կամուրջ էր ձգված։ Այդ անտառակը մենք գրավեցինք և պահեցինք ամուր, վորովհետև նա հնարավորություն էր տալիս հակառակորդի համար աննկատելիորեն ուժեր կուտակել այնտեղ և այնտեղից հարձակում գործել, ուր վոր պետք է։ Լեհերը գրավել էին Սկրեդելին գյուղը և մեծ ճանապարհը, վորը գեպի Դուբենկի յեր տանում։ Խրամատներ փորեցինք և քանիցս յետ մղեցինք հարձակում գործելու նրանց փորձերը (տես նկար 11-ը)։

Անտառից մինչև լեհական խրամատները մոտ 2000 քայլ էր բաց տեղանքով, և լեհերն փոփոխական հրաձգությամբ այնպես լավ վրաբռնել էին տարածությունները գեպի տեղա-

կան առարկաները, որ հենց ուղում էինք առաջ շարժվել, կորուստներ էինք կրում։

Ահա մի անգամ, երբ մենք գտնվում էինք ոժանդակում, նույն այդ Կլադնև գյուղում, վաշտի հրամատարը հավաքեց մեզ և հայտարարեց.

— Դեհ, ընկեր գնդացրորդներ, վաղն առավոտ շուտով մենք պետք է կատարենք մի կարևոր և պատասխանատու խնդիր. մենք մեր կրակով պետք է պաշտպանենք մեր հրաձիգ



Նկ. 11. Ինչպես եր մարտը տեղի ունենում Ակրիտիլեն գյուղի տակ։

մասերի հարձակումը։ Մեր հրեատանին նույն-

պես պետք է ոգնի այդ հարձակմանը և դասավորվի ահա այն բարձունքի վրա, որը գրաված է գյուղի յեռևում։ Այսպես ուրեմն, գնդացրային ու հրեատանական միատեղ կրակով, մենք պետք է ոգնենք մեր հրացանաձիգներին՝ դուրս քշելու լեհերին խրամատներից։ Այդ պատճառով այսոր յերեկոյան անհրաժեշտ է ամենաուշադիր կերպով պատրաստել գնդացրերը հրաձգության. գիշերով մենք մեկնում ենք առաջավոր գիծը»։

— Դեհ,— մտածում եմ,— տաք գործ է սպասվում. պետք է Մաքսիմկային այնպես պատրաստեմ, որ լեհերի հերն անիծի։

Կատարեցինք մենք ամբողջ նախապատրաստական աշխատանքը։ Գիշերը ժամի յերկուսին մեզ կամաց վոտքի հանեցին, նույնպես կամաց մենք պատրաստվեցինք և ճանապարհ ընկանք։ Մինչև անտառի յեզրը մեկ ու կես կիլոմետր եր։ Մենք շարժվում էինք չափազանց դանդաղ և զգուշությամբ։ Այդ առավել ևս անհրաժեշտ եր այն պատճառով, որ քամին փչում եր հենց դեպի լեհերի կողմը, և յուրաքանչյուր ձայն նրանց հասնում եր շատ լավ։ Սակայն մինչև անտառի յեզրը մենք հասանք շատ հաջող։ Դեռ բավականաչափ վաղ եր։ Մենք կանգ առանք փոքր ինչ հանգստանալու։

Յերբ լուսացավ, մեր հրամատարներն սկսեցին գնդացրերը տանել իրենց տեղերը։ Պետք է ասել, որ դեռ նախորեյին տեղանքի

հետախուզություն եր կատարված և գնդացրերի համար վաղորոք նշված եյին կրակային կետերը։ Ցես իմ գնդացրով կանգ առա ինձ ցույց տված կրակային կետում, վորը ծածկված եր տեղանքի ծալքով։ Լռություն եր տիրում թե մեզանում և թե լեհերի մոտ։

Դասակի հրամատարը ցույց տվեց մեզ նշանը— սպիտակ լեհերի խրամատները, վորոնք ընկած եյին հորիզոնի վրա յերևացող ճանապարհի յերկայնքով,— հրամայեց նշան դնել գնդացրերը և սպասել հրամանին։ Այդ բոլորը յես արեցի և հանգիստ սկսեցի սպասել, թե ինչ է լինելու վերջը։

Հանկարծ լսում եմ կրակոցների ձայներ և հրետանական արկերի պայթյուններ. այդ խոսել սկսեցին մեր հրանոթները։ Նայում եմ, թե վորտեղ են պայթելու արկերը։ Տեսնեմ, պայթյունները հենց ուղիղ ճանապարհի վրա յեն։ Լեհերը շարժվել սկսեցին։ Մի քիչ հետո հրաման տրվեց կրակ բանալ նաև գնդացրերից։ Կակտացին մեր գնդացրերը լեհերի խրամատների դեմ, և այնքան եյ դիպուկ, վոր լեհերը միանգամից խրամատները մատն և չեյին համարձակվում այլևս գլուխները բարձրացնել։ Իսկ մենք շարունակում եյինք հերթերով կրակել խրամատների պատվարներին այնպիսի հաշվով, վոր հակառակորդը չկարողանա կրակ բանալ մեր հետևակի դեմ։ Իսկ մեր հետևակ մասերն արդեն սկսել եյին հարձակումն անտառի յետևից։ Այդպիսով

մեր հրացանաձիգներն սկսել եյին մեզանից առաջ գնալ։ Ցեվ ահա շուտով մեր հետևակը մեզանից շատ առաջ ընկավ, և այստեղ և, վոր հարկավոր եր կրակել մեծ զգուշությամբ և ճարտարությամբ։

Բանը նրանումն է, վոր յերբ մենք կրակում եյինք հակառակորդի խրամատների դեմ, մենք կրակը վարում եյինք ցրումով։ Իսկ այժմ, յերբ մեր առջևում գտնվում եյին մեր



Նկ. 12. Ինչպես վորոշել կրակի աջ և ձախ սահմանները։

զորքերը, հարկավոր եր կրակել այնպես, վոր վոչ մի դեպքում չվնասեյինք հանկարծ մերոնց, իսկ ցրումը կատարել այնպես, վոր կրակի սահմանն աջից ու ձախից չհասնի մինչև մեր զորամասերի թևին այն տարածությամբ, վորը ծածկում է կրակողի մեկնած ձեռքի ցուցամատի տեսանելի լայնությունը։

Ճարտարություն այդ կողմից յես ունեցի։ Տեսնում եմ, վոր իմ գնդացրի կրակի ուղղությունից դեպի աջ շարժվում են մի խումբ հրացանաձիգներ մերոնցից։ Յես մեկնեցի ձեռքս ամբողջ յերկարությամբ, դարձրեցի ափս դեպի ինձ և բռնեցի ցուցամատս ուղղահայաց։ Այնուհետև, մատիս աջ յեղրը յերբ ընկավ մեր հրացանաձիգների (աջ խմբակ) ձախ թևին կիպ մոտիկ, յես տեղանքում նշեցի մի կետ, վորի դիմաց ընկավ իմ մատի ձախ յեղրը։ Այդ կետին ել նշան դրեցի գնդացիրս, իսկ յերկրորդ համարն արագ և ամուր մի ցից խփեց գնդացրի պատյանի առջևի յեղրի մոտ աջ կողմից։ Դրանից հետո արդեն յես կրակը վարում եյի, ունենալով ցրմանս սահմանը մինչև աջից խփած ցիցը։ Պետք է ասել, վոր մենք ցցերը պատրաստել եյինք վաղորոք, այնպես վոր այդ աշխատանքը շատ քիչ ժամանակ խլեց ինձանից։

Փոքր անց, յես տեսա՝ ինչպես ձախ կողմից նույնպես սկսեցին յերևալ մեր հրացանաձիգները։ Վորպեսզի նրանց ևս չհարվածեմ, յես կատարեցի հետևյալը։ Նորից մեկնեցի ձեռքս ամբողջ յերկարությամբ, չռեցի մատներս այնպես, վոր նրանց դրսի կողմերը հասնում եյին մեր հրացանաձիգների թևերին (տես նկար 13-րդ)։ Նշանի այն մասը, վոր յերևում եր չռած մատներիս արանքով, յես կարող եյի կրակել, դարձյալ առաջվա ձևով

սահմանափակելով գնդացրիս ցրման հնարավորությունը (ցցերով)։



Նկ. 13. Ինչպես վորոշել գնդակոծվող տարածության լայնությունը։

Յես արդեն յերկրորդ ժապավենն եյի արձակում մեր զորքերի արանքից, յերբ հանկարծ հակառակորդի արկը պայթեց մեր գլխավերևում։ Տեսնեմ, մեկը կանչում է. «Զուկի հրամատարն սպանված է»։ Ի՞նչ անել. ել մտածելու ժամանակ չկար։ Իմ փոխարեն պատկեց 2-րդ համարը և շարունակեց հրաձգությունը, 2-րդ համարի փոխարեն պատկեց փամփշտակիրը, իսկ յես ընդունեցի ջոկի

հրամատարությունը (կանոնագրքով էլ նշանառուն ջոկի հրամատարի առաջին տեղակալն է)։

Մինչ այդ, մեր հրացանաձիգները դանդաղ առաջ էին շարժվում, ոգտվելով ամենափոքր ծածկարանից, իսկ գնդացրերն ու թնդանոթները իրենց գործն էին տեսնում, ճնշելով թշնամու հրացանային ու գնդացրային կրակը։ Յերբ մեր զորամասերն առաջացան 750–800 քայլ, մեր գնդացրերից վոմանք այլևս չէին կարող կրակել արանքներից, և գնդացրային կրակը փոքր ինչ թուլացավ։ Լեհերն այդ հանգամանքն անմիջապես ոգտագործեցին, կատաղի կրակ բանալով մեր հրացանաձիգների դեմ։ Հրացանաձիգներն ստիպված յեղան պառկել ու խրամատվել։

Մեր գնդացրային վաշտի հրամատարը հեռախոսով հայտնեց հրետանական դիրքին՝ «Խնդրում եմ ուժեղացնել կրակը հակառակորդի խրամատների դեմ, գնդացրերն սկսում են փոխել դիրքերը, ուստի գնդացրային կրակը թուլացավ»։ Հրետանին իսկույն ուժեղացրեց կրակը, իսկ դասակի հրամատարը, ոգտվելով դրանից, հրամայեց մեր գնդացրին առաջ շարժվել դեպի հրացանաձիգների դիծը, վորպեսզի կրակով պաշտպանի մեր մասերի հարձակումը։

Յես հրաման ավեցի՝ «Կա՛ց։ Պարպի՛ր։ 3-րդ համար, հետևիր ինձ։ Վազեցեք վտանններով»։ Մի 40–50 քայլ առաջ վազելով, և ընտրելով տեղանքի ծալք, մենք պառկեցինք հանգստանալու։ Այդ միջոցին յես նշեցի առջևում գտնվող մի փոքրիկ բլրակ, և մենք դիտողի հետ վազեցինք առաջ։ Յերբ հասանք բլրակին ու պառկեցինք, նշանառուն ու 2-րդ համարը գնդացրի հետ սկսեցին առաջ շարժվել։ Այդպիսով մենք մոտենում էինք մեր հրացանաձիգներին։

Վերջապես գնդացիրն արդեն առաջավոր գծումն էր և կրակ բացեց սպիտակ լեհերի խրամատների դեմ։ Մեր գնդացրերից վոմանք առաջ քաշվեցին դեպի թիևերը, վոմանք էլ շարունակեցին կրակել մեր զորքերի արանքներից։ Սկսվեց հարձակման յերկրորդ և վերջին մասը։ Լեհերը չատով չդիմացան մեր թնդանոթների, գնդացրերի և հրացանների կրակին և սկսեցին արագ թողնել իրենց խրամատները։ Կարմիր զորամասերը կեսորվա մոտ արդեն թշնամու խրամատներումն էին և ամուր գրավեցին այդ խրամատները։

Այժմ մարտում զորքերի խմբակային դասավորության ժամանակ, մանավանդ հարձակման միջոցին, զորքերի արանքներից գնդացրերով մենք պետք է կրակ վարենք յուրաքանչյուր հարմար դեպքում, վորովհետև գնդացրերը գործելու յեն խորքից։

Ինչ ասել կուզի, վոր արանքներից կատարած այդպիսի հրաձգությունը միանգամայն անվտանգ է մեր զորքերի համար, և

այդ հրաձգության կանոնները չափազանց պարզ են և քիչ։

Քննենք այդ կանոնները և լավ հիշենք այդ։

Սպիտակ լեհերի դեմ մղած մարտում մենք ստիպված էինք կրակել և մեր զորքերի թևի մոտից և արանքներից։ Ինչպե՞ս այդ անել առանց վնասելու մեր զորքերին։

Նշանառուն մեկնեց ձեռքը, դրեց ցուցամատն ուղղահայաց և մատի յերևացող լայնությամբ դրեց իր զորքերից հեռու նշանառության կետը։ Ահա և բոլորը։ Իսկ արանքից կրակելու ժամանակ նա նշանառության կետը հեռացրեց մատի տեսանելի լայնության չափով նշանի ձախ և աջ թևից։ Մատի տեսանելի լայնությունը, այլ կերպ ասած, գնդացրից մինչև նշանը յեղած տարածության $^1/_{40}$ մասն անվանում տարածությունն է բոլոր պատահականությունների դեմ։

Ձիգերի ցրումները դեպի աջ ու ձախ կողմերը պետք է սահմանափակել, ինչպես և արավ մեր նշանառուն, գնդացրի կողքերին ցցեր խփելով։ Կարելի յե սահմանափակումը կատարել նաև վրանի պարանով, ծայրերը կապելով ծոծրակալի կոթունից ու առաստաղի ստեղներից, ինչպես այդ մասին մենք խոսեցինք վերևում. իսկ պատահում են նաև դրոշներ, վորոնք ունեն հատուկ սահմանափակիչներ, այնտեղ այդ անելն ավելի հեշտ է։

Անհրաժեշտ է հետևել, վորպեսզի գնդացրի ու մեր զորքերի միջև գնդակների վտանգություններ (ռիկաշետ) չառաջանան, վորովհետև դրանից կարող են վնասվել մեր մարտիկները։

Իսկ այն դեպքում, յերբ արանքից կրակել չի կարելի, գնդացիրը հարկավոր է առաջ քաշել դեպի զորքերի թևը կամ հրացանաձիգների գծի վրա։

Իդեպ, քննում ենք նաև, թե ինչպես գնդացիրը պետք է տեղաշարժվի մարտում։

Գնդացրները նոր դիրքերն են անցնում կա՛մ գնդացիր առ գնդացիր, կամ դասակ առ դասակ, իսկ այդ ժամանակ նրանց պետք է պաշտպանի հրետանու կրակը և տեղում մնացած հաստոցավոր գնդացրները։ Բայց գլխավորը, վորի մասին պետք է հիշել, այդ այն է, վոր գնդացրի յուրաքանչյուր տեղաշարժումից առաջ ջոկի հրամատարը դիտողի հետ միասին պետք է հետախուզեն նշած կրակային կետը։

ԶՐՈՒՅՑ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿԵՐԵՍԻ ՎՐԱ

1920 թվի հունիս ամսվա սկզբներին եր։ Մեր բրիգադը դուրս եր քշել սպիտակ լեհերին Դարնիցկու անտառի խրամատներից։—այդ Կիյեվից մի 12 կիլոմետր դեպի արևելք է։ Սպիտակ լեհերն անկանոն նահանջում եյին։ Նրանք անցան Դնեպրի աջ ափը և այնտեղ ամրացան, պայթեցնելով բոլոր կամուրջները։

Մեր հարևան գունդը գիշերով լուսաբացին փոքրիկ նավակներով անցավ Դնեպրը և արշալույսին, շարժվելով գետի կիսով, մարտի բռնվեց:

Մյուս յերկու գունդը նույնպես պետք է անցնեին գետը և ոգնեին ընկերներին: Սակայն գիշերով նավակները չբավականացան, իսկ ցերեկով վոչինչ դուրս չեկավ: Լեհերն արդեն մոտեցրել եյին հրետանին և կրակ եյին բացել գետի վրա, իսկ այնուհետև՝ պաշտպանվելով այդ կրակով, մի քանի դումարտակ անցան գրոհի և չորս կողմից սկսեցին ճնշել մեր գնդին: Գունդն սկսեց նահանջել, բայց կրկին նավակներով որը-ցերեկով անցնելու մասին խոսք անդամ լինել չեր կարող, անհնար եր գետն անցնել կրակի տարափի տակ (տես նկար 14):

Գործը վատանում եր: Այդ պատճառով բրիգադի հրամատարը հրամայեց մեր գնդացրային վաշտի յերեք դասակին դիրք գրավել գետի մեր ափին և գնդացրերի կենտրոնացրած կրակով կասեցնել հակառակորդի հարձակումը:

Մենք լավ եյինք հասկանում, թե ինչպիսի կարևոր խնդիր են դրել մեզ վրա: Մեր գնդացրերով մենք նստել եյինք այդ ինքներում ափից մի 300–400 քայլի վրա: Հարկավոր եր արագ հասնել գնդացրերը և կրակ բանալ: Բայց հարկավոր եր միանդամից կրակ բանալ մեր գոբքերի գլխի վրայով և բացի դրանից, կրակ

վարել չատ խոր չարքերով հարձակվող հակառակորդի դեմ: Ուրեմն՝ հարկավոր եր միանդամից կրակել մեծ տարածության վրա,



Նկ. 14. Ինչպես եյին գնդացրերը պաշտպանում գնդին Դնեպրից անցնելիս:

կամ այլ կերպ ասած, գնդակներով վողողել մեծ տարածություն: Յերբ հրաձգությունը վարում են մակերեսի վրա, պարզ է, վոր կրակել միևնույն նշանոցով չի կարելի: Հար-

կավոր է լինում ամենապակասը նշանակել յերկու, իսկ յերբեմն յերեք և չորս նշանոց, նշանառության կետը նշանակել մի հատ, և ցրումը կատարել նշանի ամբողջ ճակատով, բոլոր գնդացրերով:

Հենց այդպիսի հրաձգություն ել վորոշել եյին վարել մեր հրամատարները: Մինչև վոր նրանք կվորոշեյին տարածությունը մինչև նշանը և հաշվառքներ կկատարեյին, սահմանելով, թե ինչպիսի նշանոցներով պետք է վարել հրաձգությունը, մենք անում եյինք մեր դործը: Արագ գցելով մեզ մատնանշած կրակային կետերը, ընտրեցինք մի ծածկված տեղ թփերում, վորտեղ գետինն ավելի ամուր եր և նշեցինք թիկունքի հետ հաղորդակցության ծածկված ուղին: Այնուհետև սուզեցինք հատոցների կայունությունը, ամրացրինք նրանց միացման տեղերում և տեղեկացանք վիճակագրերից փողերի աշխատանքի մասին: Այնուհետև ձեռքով դուրս քաշեցինք գնդացրերը դեպի նշված կրակային կետերը, ամուր հատեցինք գնդացրերը, լցրինք և սկսեցինք սպասել հրամանի: Այդ ամենն անում եյինք արագ, ճարտարությամբ, վորովհետև ժամանակ կորցնել չեր կարելի:

Ահա տեսնում ենք, ինչպես հակառակորդը ճնշում է դեան անցնող գնդին խիտ ուխորը չարքերով: Տրվում է հրամանը. «Ուղիղ մեր առջևում, մյուս ափին հարձակվող հակառակորդի խմբերի դեմ: Առաջին պատակ 18, յերկրորդ՝ 19, յերրորդ՝ 20: Նշանադրել գեղին թփուտների տակ» (այդ թփուտները պարզ յերևում եյին բոլորին): Մի ակընթարթում հատված եյին նշանոցները, նշանադրված եյին գնդացրերը և զեկուցել եյինք, վոր ամեն ինչ պատրաստ է կրակ բանալու համար: Կրկին հրաման՝ «Ցրումով նշանի ամբողջ լայնությամբ: Կրա՛կ»:

Ճարճատեցին մեր գնդացրերը: Յես առաջին դասակումն եյի և կրակ եյի վարում, ինչպես միշտ, հավասար և սահուն, անցկացնելով նշանի ամբողջ լայնությամբ, չսեղմելով կոթուններին, և կանգ չառնելով թիվերում: Յես դեռ մի քան գնդակ ել չեյի կրակել, մեկ ել լսում եմ հրամանը՝ «Կա՛ց, սուզել նշանառությունը»: Սկսեցի սուզել.—տեսնեմ՝ նշանառությունը չեղվել է, ու գնդացիրն ել նստել է: Շտկեցի նշանառությունը, զեկուցեցի՝ «Պատրաստ է»: Նորից հրաման՝ «Նույն նշանին, կրակ»: Մի յերեսուն գնդակից հետո կրկին կանգառում և կրկին նշանառության սուզում:

Այդ յերկու-յերեք հերթերից հետո, վոր, ինչպես ասում են արձակված եյին, վորպեսզի գնդացիրն իր տեղն առնի, հրամատարներն այլևս հրաձգությունը չկանգնեցրին, և մեր գնդացրերն աշխատում եյին շատ համերաշխ:

Յես արդեն արձակում եմ փամփուշտների յերկրորդ ժապավենը, և զգում եմ, վոր յեթե հոգ չտանեմ ջուրը փոխելու մասին, ջուրը կսկսի յեռալ և ջրամբարից կժայթքի

գոլորշին, վորը կմատնի մեր քողարկված դասավորությունը: Հայտնում եմ յերկրորդ համարիս՝ «Ժամանակ է ջուրը փոխելու»: Իմ ոգնականը զեկուցեց այդ մասին ջոկի հրամատարին, և վերջինս հրաման տվեց՝ «Փոխել ջուրը»:

Մենք ոգնականիս հետ միասին ճարտարությամբ և արագ փոխեցինք ջուրը: Զեկուցում եմ՝ «Գնդացիրը պատրաստ է», և հրամանով կրկին կրակ եմ բացում:

Սակայն ենք կրակ վարել շատ յերկար: Ամեն բոպե լսվում է 2-րդ համարի ձայնը՝ «Փամփո՛ւշ»: Փամփշտակիրների համար աշխատելը շատ հարմար եր: Թիկունքի հետ հաղորդակցության ճանապարհն ընկած եր այդինների ու թփերի միջև, թշնամին մյուս ափումն եր, ուստի փամփշտակիրներին հեշտության և արագության համար թույլատրված եր թողնել հրացանները փամփշտակայանում:

Մեր անընդհատ հրաձգությունը կասեցրեց սպիտակ լեհերի հարձակումը: Իսկ մեր նահանջող գունդը կամաց-կամաց մոտեցավ ափին շատ մոտիկ, վորտեղ արդեն պատրաստված եյին նավակները: Ափը բարձր եր, ուստի ստացվում եր մեծ մեռյալ տարածություն, այսինքն՝ գնդակոծի համար անմատչելի տարածություն: Հենց այդ եր, վոր ոգնեց գնդին միանգամայն անվտանգ վերադառնալ:

Ահա տեսնո՞ւմ եք, թե ինչպես մարտում հարկ է լինում կրակել միանգամից և ինչ է տարածության վրա հրաձգությունը:

Ինչու հարկավորվեց այդպիսի հրաձգություն: Վորովհետև մեր առաջ կային հակառակորդի խոր, բայց դասավորված շարքեր: Բայց կարող եյին այդպիսի գնդակոծի համար հանդիպել և այլ դեպքեր: Որինակ՝ հակառակորդը կարող է դասավորված լինել ծածկված տեղանքում կամ ընդհանրապես ծածկարանի յետևում, կամ յերբ ճիշտ հայտնի չի լինի, թե վորտեղ է նա դասավորված, կամ, վերջապես՝ յերբ հնարավորություն չի լինի դիտել, թե վորտեղ են ընկնում գնդակները, թեկուզ և նշանը խոր չլինի: Ասենք, մի՞թե քիչ դանազան այդպիսի դեպքեր կարող են լինել:

Հիշեցնեք, վոր մակերեսի վրա հրաձգության համար հրամատարը գնդացրերին տվեց յերեք տարբեր նշանոց: Բայց, ճիշտ է, նշանոցները տարբեր եյին, սակայն նշանառության կետը բոլոր գնդացրերի համար միևնույնն եր: Ահա հենց դրանից էլ ստացվեց գնդակների ցրումը խորությամբ:

Բացի դրանից, հարկավոր եր կրակ վարել վոչ թե մի կետին, այլ գնդակոծել նշանը ցրումով կողքի ուղղությամբ: Այդ պատճառով էլ բոլոր գնդացրերի համար ցրման ճառագայթը տրված եր միևնույնը: Մենք ցրում ասելով, ինչպես քանիցս ձեզ ասել եմ, հավա-

սարաչափ, առանց սեղմելու ծոծրակալի կոթուններին:

Հրաձգության համար մենք գնդացրերը հատուկ ցինք կայուն, այնպես վոր նրանք հրաձգության միջոցին չնստեն. չե՞վոր յերբ գնդացրերի նստվածքներ ստացվեն, այն ժամանակ կփոփոխվի հրաձգության հեռահարությունը: Դրանից խուսափելու համար առաջին յերկու հերթերը հրամատարը տվեց գնդացրերի տեղն առնելուն, վորից հետո կանգնեցրեց հրաձգությունը, ստուգեց նշանառությունը և ապա միայն վստահությամբ կրակ բացեց հարվածելու համար: Կրակը մենք վարում եյինք յերկար, և դուք տեսնում եք, վոր հարկավորվեց ջուրը փոխել ջրամբարում, յերբ արդեն մոտ յերկու ժապավեն վամփուշտներ եյին արձակված:

Դուք հիշում եք, վոր այդ հրաձգության ժամանակ բոլոր հաշվառքները, գաղտնությունները ու հրամանները անում եր հրամատարը: Հրաձգությունը մակերեսի վրա ամբողջովին հրամատարական հրաձգություն է, բայց նա նպատակին կհասնի միայն այն դեպքում, յերբ համարները ամենայն ճշտությամբ կկատարեն բոլոր կարգադրությունները ու հրամանները: Կվերջացնեմ յես այսպես: Հրամատարն ամեն ինչ պետք է ճիշտ հաշվի: Բայց համարների աշխատանքն ևս պետք է լինի ճիշտ, այդ է մակերեսի վրա գործող հրաձգության հիմքը: Չե՞վոր գնդացրորդների

յուրաքանչյուր մարտական աշխատանք ընդհանուր աշխատանք է, կամ ինչպես ասում են, կոլեկտիվ աշխատանք է, իսկ կոլեկտիվում յուրաքանչյուրը մասնագետ է, յուրաքանչյուրն իր աշխատանքում ընդհանուր մեքենայի միայն մի մասնիկն է:

ՀԱՅ. ՍՍՌ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ZOUP-Ayan ESP
Ս. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎ.

«Ազգային գրադարան»
NL0276622

13.242

857

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.